

ՄԱՍԻՍ

ՀԱՆԴԵՍ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՎ ՇԱՐԱԹՆ ԱՆԳԱՄ ՄԸ




ՏՆՕՐԷՆ
ՀՐԱՆՑ ԱՍՏՏՈՒՐ

ԽՄԲԱԳՐԱԳԵՏ
ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
Պոլիս 20 Դրուշ
Գաւառները 25
Յաւ երկիրներ 6 Ֆրանք

ՀԱՍՑԷ

Ղալաթիա, Կէօյէ Օղլու Խան



ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ

Թ Ա Տ Ր Ո Ն

Ո՞վ ըսաւ որ զբօսատեղի մըն է Թատրոնը: Ո՞վ ըսաւ որ պարի կամ թղթախաղի տեղը բռնելու պէտք է ծառայէ ատեն ատեն, պարզապէս զանազանութիւն մը յառաջ բերելու համար:

Այնքան յաճախ գրուած է թէ դպրոց մըն է Թատրոնը որ այս բանաձևը չպիտի կրկնեմ. իմ աչքիս, տպագրութեան նշաններու մէջ տեսնուած մատնացոյց ձեռքի այն նշանն է որ ընթերցողին մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրէ յաջորդ հատուածին վրայ:

Կեանքի անկայուն ու յեղյեղուկ երևոյթներն՝ աչքի առջև իրենց յարատեւ ներկայութեամբը՝ հասարակ ու անկարեւոր կը դառնան գրքի մը շարունակուող ու լեցուն էջերուն պէս, և Թատրոնն է որ կենալու նշանը կուտայ, յատուկ ուշադրութեամբ դիտելու հարկը կզգայնէ աս կամ ան տիպարը որուն փոզոցը հանդիպած ենք շատ հեղ առանց գլուխնիս դարձնելու:

Եւ այդ պատկերին առջև խորհրդածելու պարտաւորած՝ հարկ չի՞ ըլլար դառնալ մեր անձին վրայ, մեր սրտին վրայ իբրեւ թէ անոնք ալ մատնանիչ եղած ըլլային, և թատերաբեմին վրայ ի տես բերուած անձին մօտէն կամ հեռուէն ունեցած առնչութիւննիս որոշել, երբեմն կատարեալ նմանութիւննիս խոստովանիլ:

Այս ըմբռնումով, Թատրոնի բարոյացուցիչ հանգամանքին բարձրութեանը ոչ մէկ արուեստ կրնայ հաւասարիլ: Բուն իսկ կեանքն է ան. ապրուածը, իրականը և ոչ թէ գրուած, երգուած կամ նկարուած կեանքը: Հոգեբանական կրկներեւոյթն է. հարազատ երկնորեակներուն վրայ իմաստասէրը ու բարոյախօսը իր ամեն

փորձերը կրնայ փորձել, ամեն միջոցները անուցանել, հետեւութիւնները երևան հանել. տեսակ մը բասթօրեան աշխատանոց որուն մէջ ուսումնասիրութիւնները ու զննութիւնները կըլլան ոչ թէ բնախօսական տեսակետով նմանօրինակ արարածի մը, այլ նոյն իսկ մարդ էակին վրայ: Եւ հոն, հասարակութիւնը, փոխանակ դրան ծակէն նայելու ներս, ներկայ է անձամբ, իր աչքով կը հետևի տեսարանին յառաջ բերած ախտաբանական երևոյթներուն, վախճանին ու դարմանի միջոցներուն:

Իսկ այն հասարակութիւններուն համար ուր որ ընթերցանութիւնը տարածուած չէ կամ գրեթէ կը պակսի, Թատրոնը անհրաժեշտ պէտք մըն է հոն: Հիմայ, մարդկութիւնը՝ ամենէն շատ, տաղտուկէ կը տառապի. հազիւ աչք մը նետած գրքի մը առաջին էջին վրայ և ահա վերջաբանը հասկնալ կուզէ. իր աճապարող հոգիին ծանր կուգայ էջերը գարձնել մի առ մի: Այսպիսիներուն համար Թատրոնն է որ պիտի գայ իր կեանքի համառօտ կրճատումովը ամենէն նեղսիրտները գոհացնել, մէկ երկու ժամուան մէջ ամբողջ տարիներու հորովումը, անցքերը, պատահածները խիտ ու հոծ ձևով մը ներկայացնել, և էապէս շահեկան մասերը երևան հանել:

Եւ դարմանք որ մեր մէջ՝ ուր ընթերցանութեան սէրը չկայի պէս է, ուր գիրք չի հրատարակուիր գրեթէ, ուր լրագիրներն անգամ հազիւ ուշացրիւ ակնարկի մը կարժանան, զարմանք որ Թատրերգութիւններ չեն գրուիր մեր մէջ, չեն խաղցուիր:

Բայց Թատրոնի բարձրութենէն իսկ կը հետևի թէ կատարեալ բան մը ըլլալու է ան կամ բնաւ ըլլալու չէ, թիէ՞ ոին մէկ խօսքը փոխ առնելով հոս ըստ պատշաճի:

Դերասանական արուեստը միշտ-
կուժիւն չընդունիր . ասոր համար է
որ այդ պայմանով ձեացած տեսարա-
նը պէտք է ուրիշ, բոլորովին ուրիշ
անուն մը ստանայ, բայց թատրոն չը
յորջորջուի երբէք :

Մեր մէջ արուեստագէտներ չեն
պակսիր ու անկարելի չէ, բնաւ ան-
կարելի չէ խումբ մը կազմակերպել որ
թատրոնը վերակենդանացնէ : Պէտք է
ի բաց թողուլ արուեստագէտի պզտիկ
նախանձները, չքաշելու, իրարմէ նը-
սեմանալու զգացումները :

Ու գործնական վերջաբան մը տա-
լու համար այս ամեն խորհրդածու-
թեանց, կը հաւատանք որ պզտիկ
ջանք մը կը բաւէ վերականգնելու
թատրոնը մեր մէջ :

Մեր հասարակութեան գործերուն
գլուխը գտնուողներուն կոչում կը-
նենք հայ թատրոնը կազմակերպելու
համար բաժին մը հանել իրենց աշ-
խատութենէն :

Դպրոցը, — այո՛. բայց թատրոնն
ալ :

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

ՊԵՇԵԿԹԱՅԵԼԵԱՆԻ

ՎԵՐՋԻՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԸ

Հետեւալ անխալ հասուածը Պեշիքաշեանի ամենեւ
եւի գրութիւնն է, մանուան առջի օրը գրուած,
անկողին մէջ, բարակ բուրբի մը վրայ, մասիսով:
Գրիգոր Օսեանի բոց որդին գնացած էր հիւանդանոցի,
անոր յանձնած էր ըսելով. — Օսեանին տա՛ւ. ու նոյն օրը
նոզին տուած է:

Ո՞վ է արդեօք որ նուսկ վերջին վարկեաններուն
կ'եղեայ բանաստեղծին .

Յեւեղաւ նա ինձ ո՞վ Սասուած իմ .
արդեօք կ'իմ մ'էր նա քէ երեսոյք սխմելի:
Քննուե էր նորա նայեացքը, նման նայուա-
ծոց լուսնակին. քիբ ցայգալան քերաբացիկ
գիւտեղոյս վրայ: Կը քայլէր նա ու քոչնիկ մը
քուցաւ ինձ որ կ'ոսոսուէր տեղէն տեղէն:

Անոյց էր նորա ձայնն ինչպէս ժպիտ մը
նորափրփր կուտի որ հիացիկ կ'գմայլի իւր
երկնասուր գեղայն դիմոց:

Եթէ ուրաւի մը իւր ձայնէն կը զլորի օ-

դոց մէջ, անբաւարար կը խայտայ երանու-
թեամբ: Սյնպէս չէ՞, Սասուած իմ, եւ քու
գուարբունիդ յերկիր կը խոնարհին իրենք եւս
ունկնդիր ըլլալու: Եթէ լուսնակի քիլի մը
վրայ, անհուն իրեւ քու անբաւարարիդ, յե-
ռուս բոլոր լոյսերդ եւ ամենագոր ձեռամբդ
ցոյց տաւ այդ երեսարուեստ շողային, չեմ
գիտեր քէ իւր անկենդան ձայնն կ'ընա՞յ այն-
քան գեղեցիկ ըլլալ որքան նորա հոգւոյն
տրձկած մէկ մեմուշը:

Ո՞վ քոյր իմ, այո՛, քու ձայնդ նուազ մ'է
վնիտ ներդաւանակութեան մը. ո՛հ, երգէ՛ ուրե-
մն, երգէ՛ միտ: Թո՛ղ նորածին առաւօտն
եւ համաափիւս գիտերուան ծոցոյն մէջ քու
երկնապաղ մեղեդիդ ծաւալանան:

Երգէ՛ հեղամնչիւն քոչնոյ, կեղերջական
կոնակին եւ հաւաքաձայն հովուն հետ: Երգէ՛
սպառնացայ երեւին հետ եւ խառնէ՛ ձայնդ
նորա մեծաստատ ձայնին հետ: Դու աւաչներդ
միւսներ էն զատուեով պիտի դողդողան ընդ
որոս: Երգէ՛ եւ քոյր ձայնդ հոլարեւէ անբաւ-
արեան մէջ նման խնկոց ներդաւանակութեան:

Երգէ՛ եւ քոյր երեսակի ի լուր երգոցդ
ըսեն. «Երկիրս կ'արժէ արհալուրիւն մը»: Եր-
գէ՛ եւ քոյր տուր ինձ խանդաւար ռորիլ:

Մ. ՊԵՇԻԿԹԱՅԵԼԵԱՆ

ՅԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ (*)

Բարից, 27 Փետրուար 1882 .

Պատուական Տէր Հայր,

Երկնից մէջ՝ յաւիտեական լուսոյ աղ-
բիւրին մօտ տեմնելով հոգւոյ աչուքներովդ
ըզքօ զաւակդ ու զաւակներդ որ այս աշ-
խարհէն անցան միայն որպէս զի վերին
աշխարհը թեւակոխելու իրաւունքն ունե-
նան, որք հաղիւ թէ ապրեցան, սուրբ
մարտիրոսներ՝ որ միայն նիւթապէս չար-
չարուեցան, զորս չապականեց մեր երկրա-
գընալին անիծեալ օդը, եւ զորս չը խոր-
շակեց արեւն որուն լոյսը լոյս չ'է եւ որ
կիզու ու խանձէ միայն ըզմեզ, միտթարուէ՛,
հայր պատուական, եւ թէ մարմինդ տկար է
այլ հոգիդ թո՛ղ հրճուի — զի անլուսնագ ե-
լան այս աշխարհէն:

Ահ գիտեմ որ դեռ մարդ ես եւ դու ալ

(*) Այս նամակն ուղղուած է Արժ. Մկրտ-
եան Հօր:

մատնուած այն հողմոց որ յար կը փը-
չեն մեր կենաց մէջ եւ անքուն գի-
շերներուդ ու անլոյս ցերեկներուդ մէջ
ճառագայթի մը պէտք ունիս, պէտք ունիս
խանդաղատեաց որ շուրջդ էին պատած —
եւ այն խանդաղատիքն ու այդ ճառագայթ
զուր տեղը կը բնտուես հիմա — պարապ է
չորս գիդ — լա՛ւ եւս ուրեմն, միայն եր-
երկի՛նք նայէ այսուհետեւ: Հո՛ն են քու
երկու սիրաբողբոջ զաւակունքդ, հո՛ն է
քու սիրտդ ուր էն ի յաւիտենից վառա-
րան խանդիցդ ու հոգւոյդ: Երկնապիլ քու
նայուածքդ թո՛ղ սաւառնին յանհուն եթերս՝
տեսանել անդ ըզժպիտ գեղածիծաղ քոյդ
սիրուն որդեկաց եւ զմեծաբարբառ ակնար-
կիս ծնողացդ:

Ա՛ռ ըզՍաղմոս ի ձեռին, եւ երբ սպառի
զօրութիւնդ աղօթելու բերնով առ Աս-
տուած, գնա՛ աղօթէ՛ գործքով. գնա՛ գտի՛ր
ինչ որ թշուառագոյնն է մարդկային արա-
րածոց մէջ, որ սարսափեր սմբեր յուսա-
հատեր է, որ արըմին մէջ կը տապալակի,
որ վեր յառնելու ոյժն է կորուսեր, որոյ
հոգին քան թէ մարմինը ակտացեալ եւ
ապականեալ՝ անէութեան արհաւիրացն է
մատնուած, — ցոյց տուր անոր գերկինք
եւ եթէ ուսուցիր իրեն աղօթել, ի՛նչ ալ
ըլլայ վիշտը, ի՛նչ ալ ըլլայ մեղքը, փրկե-
ցիր գնա՛:

Ահա՛ քու մխիթարութիւնդ:

Ու երբ ընդ վայր յածին աչքերդ եր-
բեմն, — զի մեր խեղճութիւնը այնպէս է
որ միշտ վեր չ'ենք կրնար նայիլ — երբ
պէտք զգաս մարդկային բանի մը, յիշէ՛ բա-
րեկամներդ, յիշէ՛ սէրն ու ցաւակցութիւն

Քու բարեկամիդ

ՕՏԵԱՆ

ԱՌ ՍՏԵՓԱՆ ՄԱՍԻԿՈՆԵԱՆ (*)

Ո՛հ, որքա՛ն քաղցր է լքեալ հիւանդին,
Որ ամբողջ մի ձմեռ ցաւօք տառապէր,
Միշտ աչքին տաւջ մահու գերանդին,
Երբ շնչէ հովիկն ջերմ, դարնանաբեր:

Երբոր հալածեալ փետրվարն ու Մարտ,
Իրենց հետ տանին խոնաւ ցուրտն անձրեք,
Մինչ կանանչ գորգեր զգենուն դաշտն և արտ,
Զորս արդէն զգուէ գեփեւուն գողար հեւք:

Մինչ բեռնաւորին ճիւղերն գօս ու լերկ,
Հիւթով բարգաւաճ, տան տերեւ ու ծիւլ,
Դեռ յարատեւն իմ ցաւերն ու վէրք,
Ու բնութեան նայած խափմ՝ նախանձիւ:

Ե՛կ, հասի՛ր շուտով, անձկալիդ՝ Ապրիլ,
Քեզ համար ծառերն թարմ՝ ծաղկունք բուսնին,
Ես էլ՝ նոյն բոլորն կեանք կ'ուզեմ, ապրիլ
Երբ ձագ սոխակներն նոր երգեր ուսնին:

Այլ քու ծիծեռնու՛կդ իմ գարնանուետ,
Սլացի՛ր ու գնա՛ մօտ իմ Ստեփանիս,
Մի թեթեւ գրիչ տո՛ւր քու նախշուն թեւեդ,
Որ չ'ուշացնէ զիւր նամականիս:

Ողջոյններս էլ ա՛ռ սրտիս խորերէն,
Ու փութա՛ տանիլ նորան՝ հաղորդել,
Եւ այս խօսքերն էլ ճառագէ՛լ իրեն,
Իր ուսին վերայ թառած գիւրբոսեւ:

Ո՛հ, որքա՛ն բուռն է առ քեզ իմ կարօտ,
Միշտ ծարաւն ըզգամ՝ գրոյդ և քո՛ դիմաց,
Ինչպէս որ ցօղին պապակի արօտ
Եւ արեգական շողին գգուանաց:

Թէ մօտս լինէիր իմ հոգւոյ հատոր,
Պիտի խնդրէի քեզանից խոնարհ,
Պատուհանին մերձ քշել զիմ բաղկածութեւ
Որ քեզ հետ նկատեմ՝ գարունն ծաղկաւառ:

Եւ երբ իմ աղօտ և նուաղ աչքեր,
Ձինջ հորիզոնին վերայ մնան սեւեռ,
Ուր շիկնած ամպերն միմեանց տան պաշեր,
Դեռ խաւար գիշերն չ'հագած իւր սեւեր:

Թոյլ տուր ինձ դու ևս տալ քեզ իմն համբոյր,
Ձեռքդ էլ կուրծքիս վրայ սեղմած ամուր պինդ,
Թող ծաղկանց նման սիրաք մեր քաղցրաբոյր,
Սուրբ մտերմութիւն բուրբն միշտ ի թիւդ:

Մահն իսկ յայն պահուն թէ դար ժանտագէմ,
Հէգ մարմնից բաժնել հոգիս սիրակեղ,
Յուսով գիմէի Արարչին՝ յ'Եդեմ,
Զի շատ սիրեցի բարին և ըզքեզ:

Խուսական Հիւանդանոց

2 Ապրիլ 1891.

Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ

(*) Պ. Ստեփան Մամիկոնեանն ուսուսհայ մըն է
որ անձնուէր բարեկամ մը եղած է հանրածանօթ
բանաստեղծ-դերասանին:

ԿԱՂԱՆԴԻ ՆՈՒՆԵՐԸ

Կանանց ծածկոցով սեղանին առջև, որուն վրայ պզտիկ լամբայ մը կը վառէր, գլուխ գլխի կը նստէին մայր ու տղայ ամեն գիշեր:

Տիկին Աննիկ կարի խոշոր ծրարը քովը՝ ասեղ ծեծելով շարունակ, մինչ Վահրամ յաջորդ օրուան դասերը կը պատրաստէր: Եւ մերթ ընդ մերթ կը ձգէին իրենց աշխատութիւնները բառ մը ըսելու համար իրարու, յոգնութիւն առնելով վայրկեան մը իրարու նայուածքի մէջ: Յետոյ յանկարծ երկուքին ալ միտքը կարծես կեդրոնախոյս զօրութենէ մը մղուած հեռու հեռու կը փախչէր ներկայէն մին դէպի անցեալը, միւսը դէպի ապագան:

Վահրամ ապագային կը մտածէր շարունակ. կրկին ու կրկին կը հաշուէր մտքին մէջ այն հինգ երկար տարիները զորս պիտի անցնէր տակաւին վարժարանին մէջ, իր մօրը ձեռքին աշխատութեամբը ապրելով, անոր աչքին լոյսին, արիւն քրտինքին զինը ուտելով սպառելով իր ուսանողի ապիկար կեանքին մէջ. Եթէ մէյ մը զպրոցէն ելլէր սակայն. ինչե՞ր չը պիտի ընէր անոր համար, իր խեղճ մօրը համար, որ իր երեսունընդհինգ տարեկան հասակին մէջ՝ վաստակի բեռին տակ կ'ըսէ՝ ծեր կերեւար արդէն: Եւ աչքերը դադուռ կ'ընէր վրայէն վեր առնելով կը նայէր անոր այն գորովագութ խանդավառութիւն անձառն արտայայտմովը, զոր զաւակ մը մօրը համար միայն կրնայ զգալ աշխարհի վրայ:

Կազին տկար ցոլքերուն տակ՝ աւելի նիհար, աւելի հիւծեալ կերեւար ան իրեն. աչքերուն կոպերէն խորունկ գիծ մը սկսելով իր սեւ սեւ խոշոր արտեւանունքներէն ինկած թելի մը պէս այտերն ի վար կերկրնար. մազերուն մէջ տեղ տեղ ճերմակներ ցանցնուած էին. մոմի պէս հալած մասներուն մէջ ասեղը կը դողար, եւ թելը անցուցած ատեն լոյսին կը մօտենար, կը մօտենար իբր թէ իր աչքերուն լոյսը համառ սպառած ըլլար:

Խեղճ տղուն սիրտը ելած՝ երկու ձեռքերովը երեսը կը ծածկէր պահելու համար

արցունքի կաթիլները, որոնք հոգիին խորունկէն բլթած, հալած կապարի հատերու պէս գրքին վրայ կիյնային անմոռուն:

Մայրը այն պահուն անցեալին մէջ մոլորած իր երջանկութեան օրերը կը յիշէր, երբ ամուսինը ողջ էր տակաւին. երիտասարդութեան բոլոր հաճոյքները, բոլոր քաղցրութիւնները, զորս վայելած էր իր ամուսնական կեանքին մէջ, մեծ, անհատնում սիրոյ մը լուսեղէն մթնոլորտին մէջ ապրելով եօթը տարի շարունակ: Միտքը կուգար իր սիրած անձին հետ պսակուած օրը՝ եկեղեցին՝ լոյսերու, խունկերու եւ երգերու զգլխիչ արեւոյթեան մէջ. յետոյ իր Վահրամին ծնած օրը, երբ իր էութենէն ծնած այդ հրեշտակը իր գիրկը տուեր էին. տարի մը ետքը անոր մկրտութիւնը. ժանեակներու, ժապաւէններու մէջ ծաղիկի մը պէս գեղածիծաղ այդ պէպէքը, որուն վարդի պէս այտերը գտակին նուրբ բեհեզին տակէն կը խնդային իրեն. եւ կլորիկ գիրուկ բազուկները ձիւնաթոյր շրջազգեստին շըղարշներուն մէջէն իրեն կը կարկառէր. Հիմակ կը դառնար կը նայէր նորէն անոր վրտիտ դէմքին, որուն արեան պակասութենէն քաշուած տոգոյն մորթը կզակներուն կը փակչէր, չրթունքները ցամքած, հիւանդոտ զգաստութիւն մը կարտայայտէին. աչքերը միայն, սուր սեւ աչքեր, կը կենդանացնէին այդ տառներեք տարեկան տղուն դէմքը, որ փթթելէ առաջ կը խանձէր անշուշտ սընունդի, զրօսանքի եւ զուարթութեան պակասութենէն: Ծիչդ իր հօրը դէմքն էր, անոր խելացի եւ անուշ կերպարանքը, անոր թրթռուն, զգայուն շեշտն ունէր ձայնը, եւ իր զաւակին վրայ կը գտնէր զժառոգ մայրը վերականգնացումը այն ամեն հրապոյրներուն, զորս տարեր թաղեր էր ամուսինը գերեզմանին պաղ քարին տակ:

Խեղճ կին. իր սիրելիին մահուան վրայ ազատօրէն լալու տխուր սփոփանքն ալ չէր ունեցած: Պզտիկ սուգ մը կը ցած էր պահել, աղքատի սուգ մը: Անոր հիւանդութիւնը առեր տարեր էր իր խնայողութիւնները, եւ եօթը տարեկան զաւակին հետ միտ մինակ մնալով աշխարհի վրայ, ստիպուած էր մէկ կողմէն ժպտիլ անոր երեսին, խաղալ անոր հետ, եւ միւս կողմէն ձեռք

առնել այն միջոցները որով կարելի ըլլայ պէտք եղած դաստիարակութիւնը տալ անոր եւ պատուաւոր կերպով պահել իր տունը: Մէկուն չը դիմեց. իր սիրտը մէկուն չը բացաւ. բոլոր ոյժը ժողուեց ու կար կարող եղաւ:

Կար կը կարէր, նուրբ կարեր. առտուրնէ մինչեւ իրիկուն, գիշերներն ալ աշխատեցով հազիւ 8 դրշ. օրական կը շահէր:

Օրթագրել խեղճ թագի մը մէջ կը բնակէին: Տղան Կեղրոնական վարժարանը ընդունուած էր ձրի. 80 դրուշ շոգենաւի եւ ցորեկուան ուտելիքի ծախք կը վճարէր, մնացած գումարով կը հոգացուէին իրենց ուտեստի, հագուստի բոլոր պէտքերը: Երբեմն ալ շաքարներով գործ չէր գտնուէր. այն ատեն արանց շապիկներ կ'արգէր, եւ այսպէս խեղճ ու կրակ կապրէին եօթը տարիէ ի վեր:

Իր չքաւորութեան եւ տառապանքերուն գաղտնիքը մէկը չէր դիտեր սակայն. դրարոցին մէջ կոկիկ հագուած մաքուր տղայ մըն էր Վահրամ, միշտ փայլուն կօշիկներով, նոր գուլպաներով, ու աղքատ տղոց վաղահաս արթնութեամբը զգալով թէ ինչ կարմէին անոնք իր մօրը, կը դողար որ մեկնաւ արատ մը, կամ ցեխի բսոր մը չը ցատքէ վրան: Փոխադարձաբար մայրն ալ տեսնելով տղուն իր վրային գլխուն համար ունեցած խնամքը, կը մաշէր որ չէր կրնար ձեռք մը ազուոր զգեստ չինել տալ անոր: Ու մէկուն չը կրնալով վատհիլ իր անձկութիւնները, որոնք ա'լ չը սղմելով սրտին մէջ դուրս կը պոռթկային, իր ատեղին հետ կը խօսէր, այդ պղտիկ գործունեայ ասեղին, որուն կը պարտէր ամեն բան, զոր բարեկամի մը պէս կը սիրէր, եւ որ կը բզկտէր, կարիւնոտէր իր մատները յուզմունքի վայրկեաններուն մէջ, կարծես այդ ֆիզիքական ցաւով մոռցնել ուզելով անոր ներքին ցաւը, կսկիծը իր անգործագրելի մնացած բաղձանքներուն:

Խեղճ կնոջ հաստատ մտածումն էր աւելի դրամ շահիլ. ինչ փափաքներ ունէր Վահրամին համար. բայց որչափ ալ աշխատէր, բան մը չէր կրնար աւելցնել. ինչ ընէր, ինչ ընէր...

— Եթէ մաքինայ մը ունենայի ..., գո-

չեց յանկարծ բարձր ձայնով ինքն իր հարցման պատասխանելով:

Վահրամ աչքերը վեր առաւ, մօրը նայեցաւ, յետոյ նորէն գլուխը կախեց անխօսուելի: Եթէ մեքենայ մը ունենար, անշուշտ այդքան չէր յոգներ, աչքերը այդքան չէին տկարանար եւ մատները չէին ծակծկեր: Ինչ ընէր մօրը մեքենայ մը գտնելու համար...

Երկար ատենէ ի վեր բոլորովին փոխուած էր Վահրամ. ա'լ առջի մաքրասէր, խնամատ տղան չէր: Առտուները լուսցածին պէս փողոց կիցնար. եւ իրիկունները մութը կոխածէն առաջ դռնէն ներս չէր մտներ: Ամառը փոշիներու մէջ թաթխուած, յոգնած, քրտնած, ձմեռը մինչեւ կէս մէջքը ցեխերու մէջ փաթթուած, ձեռքերը, ոտքերը ցուրտէն սառած, կօշիկները ջուրերու մէջ տուն կուգար: Ա'լ գիշերները կանանչ սեղանին առջեւ չէր նստէր իրեն հետ, ու կերակուրին տակ՝ քունը աչքէն կը վազէր: Շատ անգամ եկածին պէս անկողնին վրայ կիցնար առանց բերանը պատառ մը բան դնելու: Խեղճ մօրը սիրտը փորը կը հասնէր. ո'ր կերթար այնչափ կանուխ եւ ինչու ու չը դառնար: Ի դուր կը ջանար տղան հարցուփորձ ընել, միշտ անորոշ պատասխաններ կատանար. — Դպրոցին ժամանակացոյցը փոխուեցաւ. — Ինչ ընեմ, մամա, շոգենաւին չեմ հասնիմ կոր:

Տիկին Աննիկ կը համկնար որ տխուր բան մը մտած էր իր տղուն կեանքին մէջ, զոր յամառաբար իրմէ կը ծածկէր: Առաջները յուսաց որ մանկական քմահաճոյք մըն է, կանցնի, բայց վեց ամիսէ ի վեր կը շարունակէր այս կեանքի անկանոն ընթացքը առանց իր աղաչանքներուն գիշում մը, իրեն համար մէկ օր մը բացառութիւն ընելու. եւ իր տղուն զգալապէս տկարանալը նշմարելով, սրտին կսկիծէն յանդիմանութիւններ կուղղէր անոր: Յետոյ կը զջար. վասնզի միշտ առջի խանդակաթ, զգայուն զաւակն էր Վահրամ, միեւնոյն հոգածութիւնները, միեւնոյն անուշ սիրտը ունէր իրեն համար, եւ զայն վիրաւորել չէր ուզէր ամենեւին. բայց կրնա'ր անտարբեր մնալ անոր ապրելու կերպին:

Անգամ մը որ խստիւ կը հարցաքննէր

զայն նորէն, սղան սկսաւ լալ : Ուրիշ անգամ մը վերջնապէս բերնէն փախցուց թէ կաղանդին ամեն բան պիտի իմանար :

Այն ատեն որոշեց որ սպասէ . գիտէր իր տղուն հաստատամիտ բնավորութիւնը . ճիշդ հայրն էր : Տարեղիտուն քանի մը օր միայն մնացեր էր , եւ այդ օրերուն մէջ ամենէն աւելի մտատանջութիւններ կրեց . իրաւ , բա՛ն մը կար ուրեմն :

Սակայն եթէ օր մը անոր ետեւէն երթար Տիկին Աննիկ , պիտի տեսնէր որ փոխանակ Օրթագիւղի շողենաւը մտնելու ցամաքի ճամբան կը բռնէր Վահրամ , եւ ոտքով կերթար մինչեւ Կեղորոնական վարժարան , այդ աւելորդ ծախքը խնայելու համար : Զիւնին , բուքին կը քալէր ու կը քալէր ձեռքերը վերարկուին զրպաններուն խորը՝ դէմքը կիսովի օձիքին մէջ պահած՝ մերթ ընդ մերթ կանգ առնելով ճամբուն եւ զերքը շունչ առնելու համար , ու նորէն կը շարունակէր իր տաժանելի ուղեւորութիւնը սառույցի կտորուանքէն վար սահելով ինչաւով շատ անգամ , երբ իր ոտքերը ալ չէին բռնէր :

Երբեմն բուքը այնքան թանձր ու սաստիկ կը լլար որ կոխած տեղը չէր տեսնէր . այն պահուն կը փորձուէր անկէ անցնող թրանվայի մը մէջ նետուիլ , բայց հօօր խորհուրդ մը այդ տկար տղան կը կեցնէր : Ի՞նչ էր այդ զաղանիքը մարդ չը գիտէր . բայց գերազանց բան մ'ըլլալու էր . վասն զի անոր ոյժովը այդ պզտիկ տղան մեծ բընութեան հետ կը մաքառէր :

Միեւնոյն բանն էր ցերեկուան ճաշի աւտէն . ա՛լ ոչ մրգավաճառին , ոչ նպարավաճառին խանութէն ներս կը մտնէր իր տասը փարսնոց հացին հետ քիչ մը ընկոյզ կամ սլանիւր գնելու համար : Կը նայէր կարմուռի փայլուն խնձորներուն , խոշոր նարինջներուն , կլորիկ սերկեւիլներուն , լեւի լեցուն նուռներուն , եւ իր մանկական առողջ ախորժակին մէջ՝ բերնին թուքերը կուլ տալով կը հեռանար մինակ անկիւն մը իր ցամաք հացի կտորը կրծելու :

Կաղանդին առտուն կանուխ երբ Տիկին Աննիկ անկողինէն ելաւ , Վահրամ կը քնանար տակաւին (սուտ քուն եղած ապահովապէս) : Գորովալից մայրը ոտքին մատ-

ներուն վրայ կոխելով՝ կամաց կամաց քովի սենեակը անցաւ իր սովորական ժողվրտութեան ընելու , ուր կանանչ ծածկոցով սեղանին վրայ կը կենային առջի իրիկունէ մնացած պտուղներուն աւելցուքները պզտիկ պզտիկ պնակներու մէջ : Յանկարծ բան մը զարկաւ աչքին . սեղանին մէջ տեղը դրուած կարի մեքենայ մըն էր նոր նոր , փայլուն ընկուղենիէ կափարիչով . վրան ալ թուղթ մը փակցուցեր էին : Մօտէն նայեցաւ . իր տղուն գիրն էր , ու կարդաց .

Նուհր կաղանդի մանուշիւ հաւառ

Միեւնոյն վայրկեանին կամացուկ մը սենեակին դուռը բացուեցաւ , ու եկաւ իր թեւերուն մէջ ինկաւ Վահրամ . « Մի՛ սրտոյր , մամա , կըսէր , շողենաւի համար տուած դրամովդ առի . անոր համար իրիկունները ուշ կը մնայի . . . » Ու համբոյրներով կը ծածկէր իր մայրը սրբելով անոր արցունքները , որք այսօրն ի վար կը վազէին :

Ս Ի Պ Ի Լ

ՄԵՂՈՒՆ

ՊԱՐՈՆԵԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐՈՎ

Հայ լրագրութեան պատմութեան մէջ Յարութիւն Սըվաճեանի Մեղուն կարեւոր տեղ մը բռնած է : Անգղանիկ հայ զաւեշտաթերթը, որուն աշխատակցած են երբեմն Գրիգոր Օտեանի պէս գրողներ , նորութիւն մը եղած է Պոլսոյ լրագրութեան առաջին տարիներուն մէջ , և այսօր հետաքրքիր բանասէրը թղթատելով այդ թերթը , այն ժամանակուան տոհմային և ընտանեկան կեանքին զանազան երևոյթները պարզուած կը գտնէ հոն , պրպտող աչքով մը դիտուած , իրականին գիտակցութեամբն ըմբռնուած :

Մեղուի առաջին թիւն հրատարակուած է 1857 Սեպտեմբեր 15ին և Սըվաճեան խմբագիր եղած է մինչև 1862ի վերջը . 1863էն սկսեալ Յովհաննէս Հովուեանց, Աբրահամ Մու-

րատեան, Արմենակ Հայկունի յա-
ջորդաբար խմբագիր եղած են Մե-
ղուի, որ 1865ին կրկին Սըվաճեա-
նի խմբագրութեամբն սկսած է հրա-
տարակուիլ և այն տարին դադարած
է՝ չնորհիւ քանի մը դիւրագրգիռ աղ-
գայիներու, զորս Սըվաճեան հան-
գիստ չէր թողուր և կը շքայլէր ան-
խնայ իր յօդուածներով։ Սըվաճեան
հինգ տարուան լուծեանէ ետքը նո-
րէն կը հրատարակէ իր Մեղուն, 1870
էն 1872, իբր եռօրեայ թերթ։

* * *

Միտք չունիմ հոս քննել Մե-
ղուի այդ զանազան շրջանները որոնց
ուսումնասիրութիւնը մեր ժամանա-
կակից պատմութեան քանի մը կա-
րեւոր թուականներուն վրայ մեծ լոյս
կրնայ սփռել։ Սակայն կ'ուզեմ ծա-
նօթացնել Մեղուի վերջին շրջանը, ո-
րուն յիշատակութիւնն իսկ չըներ
Հանդէս Ամսօրեայի մէջ հրատա-
րակուած Հայ յրագրութեան Պա-
ստաւան հեղինակը, այն շրջանը որ
կը սկսի 1872 Նոյեմբեր կին։

Մեղուի այս շրջանին խմբագիր -
Տնօրէն կ'ըլլայ Յակոբ Պարոնեան։
Սըվաճեան, իբր արտօնատէր, այդ շը-
ջանի Յայտարարութեան մէջ կ'ըսէ.
“Շատերը կ'ըսէին մեզի որ օգնական
մը գտնենք։ Բայց թէ՛ գրելու կարող
և թէ՛ Մեղուի արդիւնքովը անօթի
մնալ յանձն առնող անձ մը գտնել
որչա՞ք դժուար էր։ Մեղուի՞ն թէ
անոր ընթերցողներուն, չը գիտենք
որի՞ն բաղդէն էր որ այս օրերս ձեռք
անցուցինք այնպիսի բարեկամ մը,
որ վերոյիշեալ երկու յատկութիւն-
ներուն վրայ հանրութեան անկուտի
ծառայելու յատկութիւնն ալ աւել-
ցուցած է. ասի արդէն ծանօթ է
ժողովուրդին երբեմն Եփրատայ խմ-
բագրութեամբն և կարճ միջոց մ'ալ
Մեղուի խմբագրական օգնականու-
թեամբը։”

“Մեղուի արդիւնքովը անօթի մը-
նալ յանձն առնող”ը եռանդով գործի
կը սկսի և կանոնաւոր կերպով կը հը-

րատարակէ զայն մինչև 1874ի սկիզ-
բը։ Այս տասնչորս ամիսներուն մէջ
մարդ կը տեսնէ այդ ատենուան մեր
եկեղեցականներու կեանքին, Աղգա-
յին Վարչութեան, լրագրութեան, զը-
րականութեան, թատրոնին, ընտանե-
կան կենցաղին համայնապատկերը։ Պա-
րոնեան կ'ընդգրկէ ամեն խնդիր, և
փեթակէն թուող վաղվադկոտ մեղու-
ները կ'երթան խայթել անխտիր ջօշն
ու բարեկեցիկը, եկեղեցականն ու
թաղականը, դերասանն ու խմբագիրը։
Երբ մոլութեան մը դէմ կը խօսի, երբ
թերութիւն մը մասնանիչ կ'ընէ,
խստափոյթ բան մը ունի, անդուծ,
աններող։ Կը հարուածէ միշտ ինչ որ
իրեն փաստակար կ'երևայ, չարը, տը-
գէտը, տգեղը, ծաղրելին։

* * *

Ամենէն աւելի եկեղեցականու-
թիւնն է որ իր երգիծանքին կ'են-
թարկի։ Եկեղեցականի մը ամենէն ան-
ըջան յանցանքը իր աչքին առջև ա-
հագին համեմատութիւններ կ'առնէ։
Եկեղեցական մը որ չէր ուզած եր-
կար տարիներ հեռանալ մայրաքա-
ղաքէն և պաշտօն ընդունիլ գաւառ-
ները, իր ամենէն կծու քննադատու-
թեանց առարկայ կ'ըլլայ. և երբ Պոլ-
սի մերձակայ կարեւոր վիճակէ մը
առաջնորդ ընտրուելէ ետքը հոն ալ
կը մերժէ երթալ, Պարոնեան նրբա-
մշտօրէն կը հեգնէ զայն, և Մեղուի
թիւերէն մէկուն մէջ ալ հետեւեալ
ազգը կը հրատարակէ.

“Կը յստիքս քե Պասրիարիւրանը
իր անշարժ կայուածներուն տեսեալ-
կին մէջն է անցուցեր այդ եկեղե-
ցականը։”

Պարոնեան մերթ ունեցած է այս-
պիսի անողոք սրամտութիւններ, զորս
պէտք է ներել արուեստագէտին,
մանաւանդ երբ մարդ վստահ է թէ
գծուծ նկատումներ չեն որ կը ներ-
շնչեն զայն։

Մեղուի խմբագրապետը կը յար-
ձակի նաև կարգ մը կրօնաւորներու
դէմ որոնց բարոյականին նկատմամբ

ամբաստանութիւններ կը լուռէին . և կը հարուածէ զանոնք . . . արձակով և ոտանաւորով :

Ինչ որ ամենէն աւելի առիթ կուտայ Պարոնեանի երգիծանքին, այն ատենուան հայ լրագրութեան վիճակն է :

Մանգուսէ և Օրագիր, տաք բանակուի մը մէջ ամիսներով իրարու դէմ իրենց գրչին շաղկապութիւնը փորձելէ ետքը, հուսկ ուրեմն կը հաշտուէին: Պարոնեան այդ վէճը և այդ հաշտութիւնը կը յարեցէր սիրուն յօդուածի մը մէջ, որուն գլխաւոր մասերը յետոյ կարապետ փանոսեանի կենսագրութեան մէջ ընդօրինակած է Ազգային Զոջերու հեղինակը :

Մասիսի և Փռնիջի վէճն ալ նոյն միջոցին մեծ աղմուկ կը յարուցանէ հայ լրագրութեան մէջ: Մասիսի խմբագիրը դատ կը բանար Փռնիջի խմբագրին դէմ որ իրեն նկատմամբ անուարկիչ յօդուածի մը մէջ զինքը կոչած էր կենդանի: Փռնիջի փաստաբանը դատարանին առջեւ կը յայտարարէր թէ կենդանի բառը անուանարկիչ հանգամանք չունի: Այն ատեն նշանաւոր պայքար մը կը սկսի հայ լրագրութեան մէջ, կենդանի բառին իմաստին վրայ. ումանք կ'ըսեն թէ այդ բառը կը նշանակէ «նա որ կ'սպրի» և ուրիշներ ալ կ'ըսեն թէ կը նշանակէ «անասուն»: Զամուրճեան Տէրոյնց և գրագէտ եկեղեցական մը կը յայտարարեն թէ կենդանի անասունի իմաստ չ'ունի, և Պարոնեան կը պատասխանէ անոնց օրինակներ բերելով Միսթար Դօշէն, որ այդ բառին անբանի իմաստով գործածած է:

Օր մըն ալ խմբագիր մը, որ շատ համեստ դեր մը ունեցած է մեր լրագրութեան մէջ, կը ծանուցանէ թէ Միսաքեան խաչատուր պատուելին իր թերթին մէջ պիտի յայտնէ իր կարծիքը Մասիսի դատին բառաշնչական մասին վրայ: Միսաքեան, որ երկար տարիներ Բարիզ ապրելէ ետքը Պոլիս դարձած և իւսկիւտար հաստատու-

ուած էր, կը վայելէր այն ատեն ալ մեծ գրագէտի համբաւ և ծանօթ էր մանաւանդ իր Եպիսկոպոսի Վոսփորով, իր Տիմոքիսիով և իր Ինքնատիպ յօդուածներով, գրական հիմնութեամբ և կորովով գրուած: Միսաքեան բաւական տարիներ լուծիւն պահած էր և Բարիզէն դառնալէն ի վեր ամեն մարդ հետաքրքիր էր լըսել զինքը: Մեղորի խմբագիրը, որ հաշտ չ'էր Միսաքեանի հետ, կ'ըսէր թէ «վերջապէս համրը պիտի խօսի», և կը յարէր. «Ինչպէս տղայ մը լեզու ելած ատենը անոր ծնողքը կ'ուրախանան, այսպէս ալ հայ գրականութիւնը կ'ուրախանայ երբ կը լսէ որ Մեծ. Միսաքեան էֆէնտի լեզու պիտի ելնէ, որովհետեւ Միսաքեան էֆէնտի հայ գրականութեան ծեր երախայն է: . . . Միսաքեան էֆէնտի այս խնդրոյն առթիւ այդ թերթին մէջ իջնալովը խոնարհութեան օրինակ կուտայ խմբագրական աշխարհին, ինչպէս որ Յիսուս ալ տառնալիք դար առաջ նոյն խոնարհութեան օրինակը տուած էր աննշան կենդանիի մը վրայ նըստելով:»

Մասիսի եւ Փռնիջի դատը երկար կը տեւէ եւ հուսկ ուրեմն իւր թիւճեան եւ Ալաճաճեան կը հաշտուին ներսէս Պատրիարքի միջամտութեամբ:

Պարոնեան կը ծաղրէ անխտիր այն ժամանակուան բոլոր հայ թերթերն ալ, յաճախ գռեհիկ զուարճախօսութիւններ ունի անոնց դէմ, կոչտ հեքնութիւններ, որոնք իրեն պէս նրբամիտ երգիծաբանի մը տաղանդին անարժան են: Սակայն անոնց քով տեղ աեղ ինչ սիրուն գիւտեր ալ սրամտութեան:

Հանրածանօթ խմբագիր մը, որուն համար կը պատմուի թէ ձմեռուան սաստիկ ցուրտերուն դէմ անգամ իր բարակ վերարկուով միայն կը պատըսպարէր անձը, որ մը կը հրատարակէ կարեւոր լուր մը, զոր հետեւեալ օրը ուրիշ թերթեր սուտ կը հանեն: Պա-

րոնեան այդ խմբագրին դէմ կը յարձակի, կը յայտնէ թէ իր հրատարակած սուտ լուրերուն համար պէտք է ամչնայ, թէ պատմութիւնը պիտի դատապարտէ զինքը, եւ կ'աւելցնէ խօսքն ուղղելով անոր. «Դողա՛, դողա՛ ապագային առջեւ . . . քու ամառուան բալթօյովդ»։

Ուրիշ անգամ մը Պարոնեան կը ծեքենայէ իզմիրի Արշայոյսին մէկ յօդուածը, որ կը գանգատէր ժամանակին Ոստանական Խորհրդին դէմ իր գործած մէկ աններելի ոճիրին հահամար։ Գիտէ՞ք ինչ էր այդ ոճիրը։ — Ոստանական Խորհուրդը իզմիրի Ոստանական Խորհուրդին աշխարհաբար նամակ գրեր էր փոխանակ գրաբարի։ Արդարեւ, կը գրէր Պարոնեան, Ոստանական Խորհուրդը մեծ անարգանք մը ըրած էր իզմիրի ոստանականներուն «զնամակ իւր գրաբար լեզուաւ չգրելով եւ կամ լեզուաւ զնամակ գրաբար չգրելով իւր» . . . :

Մեղուին մէջ՝ ^{*} ^{*} հրատարակուած յօդուածներուն կարեւորագոյն մասը յատկացած են մեր ընտանեկան կեանքին զեղծումները պատկերելու։ Կը զգաս որ Պարոնեան իր տարրին մէջ է հոն։ Իր անդրանիկ տպաւորութիւնները կը գտնես այդ երկու հարիւր թերթերուն մէջ և իր առատ, զեղուն գաղափարներուն մէջ կը զգաս թարմ մտքի մը բոլոր աշխոյժը։ Տարիներէ ի վեր գիտուած զննուած նկարագիրներ են, որոնք վրձինի քանի մը շարժումով պատկերուած են, այնպիսի մանրամասնութիւններով, զորս ամեն օր մեր շուրջ կը տեսնենք, առանց սակայն կանգ առնելու անոնց առջև։ Ազնուութեան յարստածներուն մէջ կը գտնես ֆրանսերէնով երգուող փերեւետիկ կիներու և չփրթիկ երիտասարդներու ճշգրիտ տիպարներ, որոնց ոստանասիրութիւնը Պարոնեան կը պարտի Հեռագրատան պաշտօնեայ եղած ատեն Բերայի մէջ վարած աշ-

խարհիկ կեանքին։ Խազ Մուսային մէջ կը հեքնէ այն երիտասարդները որոնք աղջիկ փնտռելու կ'ելլեն, ամէն դուռ կը զարնեն, մէկուն չեն հաւնիր և կը մնան միշտ ամուրի։ Զասկիւն նոր հագուստ յունեկաւոր սուս հիւսանդ անւացողը շահեկան դէմք մըն է զոր Պարոնեան նրբամտօրէն կը ներկայէ մեզ Զատիկի առթիւ հրատարակուած յօդուածի մը մէջ, զոր այսպէս կը վերջացնէ. «Վերջէն առած լուրերնուս նայելով վարժապետները ու խմբագիրներն ալ պիտի հիւրնդնան եղբր»։

Պարոնեան ունի Մեղուի մէջ ուրիշ կարեւոր յօդուածներ ալ, ուր կը ձաղկէ խաղամոլութիւնը, պճնասիրութիւնը, շուայլութիւնը, մեր ընտանեկան կեանքէն անբաժան այդ մոլութիւնները։ Բարոյախօսն է որ հոն ի յայտ կու գայ երգիծաբանին մէջ. այն զգացումը որ կը ներշնչէ խնդուքն է, որ յաճախ ատելութեան կը յանգի այն բանին դէմ որուն վրայ խնդացնել կու տայ. և ընթերցողը, որ ժպիտը շուրթին վրայ կը կարդայ, կը զգայ թէ լուրջ մտածում մը կը յաջորդէ այդ զուարթութեան, երբ յօդուածը կ'աւարտի։

Պարոնեան ^{*} ^{*} ^{*} գրեթէ ամեն թերթի մէջ գրած է նաեւ խմբագրական մը օրուան խնդրին վրայ, միշտ կծու ոճով, բանակուական գրուածներ որոնց մէջ երբեմն թրթրակի մը ձեւերը կ'առնէ, բայց միշտ ի յայտ կու գայ իբր կարող հրապարակագիր մը։ Յամառ կերպով կը պաշտպանէ իր սկզբունքները. ժամանակուան կրօնական ժողովին կողմէ իրեն ուղղուած ազդարարութեան առջեւ բռնած ընթացքը ապացոյց է ասոր և շատ նպաստաւոր գաղափար կու տայ իր բարոյական նկարագրին վրայ։

Այս յօդուածներէ ետքը յիշատակութիւն մը միայն կը պարտինք նաեւ իր գրած Զուարճալիքներուն, Խաղաղութեան, Մանր յուրերուն

ուր երբեմն կը հանգիպիս նրամիտ գիւտերու, թէեւ օրը օրին գրուած, հասարակ ժողովուրդին ծիծալ պատճառելու սահմանուած այդ տողերը յաճախ զուրկ են գրական արժանիքէ:

Պարոնեանի * * * Մեղորին մէջ կը գտնենք նաեւ երեսունի չափ ծագրապատկերներ, բաւական խնամով պատրաստուած: Ատոնց մեծ մասը ակնարկութիւններ են լրագրութեան, Ազգային Վարչութեան, թաղային շրջանի, ընտանեկան կեանքի վերաբերեալ խնդիրներու: Այն պատկերն որ Ուսումնական Խորհուրդը կը ներկայէ իբր տաաներկու տարւան անդամալոյծ մը սիրուն գիւտ մըն է: Լաւ մտածուած են նաեւ կանանց արուեստական կուրծքերը և մագներու բրգային յարդուզարդը ծաղրող խառիւրդները:

Այդ ծաղրապատկերներու գաղափարը Պարոնեան կը յղանայ և Սիման էֆէնտի Եազըճեան կը գծադրէ եղեր ղանոնք. յետոյ այդ գծագրութիւններով կը պատրաստուին եղեր վիմագրուած և փայտի վրայ փորագրուած պատկերներ, որոնց աշխատած է նաեւ ծանօթ փորագրիչ և տպագրիչ Պէռպէռեան Նշան էֆէնտի: Ըսենք անցողակի թէ Մաւնոյի մէջ հրատարակուած ծաղրապատկերներու գծագրիչն եղած է Տելամաք Էնքսէրճեան, վաղամեռ տաղանդաւոր պատկերահանը:

* * * Մեղորի մէջ է որ կը գտնենք Պարոնեանի գրական և երգիծական տաղանդին առաջին բողբոջները, ինքնատիպ տաղանդ մը որ հետզհետէ կ'աճի, կ'ուռճանայ և իր գերագոյն զարգացումը կը գտնէ ետքը Զոյնու և Խիկարին մէջ: Պարզ լեզու մը, ժողովրդական բառեր, ամեն օր խօսուած բնական բարբառով միայն գրեթէ ոչ ուրեք այն ոճի նրբութիւնները, բացատրութեան երանգաւոր ձեւերը, որոնք երգի մը ըն-

կերացող երաժշտական խաղերու ելեւէջներուն պէս բուն եղանակին վրայ բան մը չեն աւելցնէր, և կամ ընդունելութեան սրահ մը զարդարող գեղորներուն նման աչքին զրգանք ազդելէ ուրիշ օգուտ մը չունին: Իր գրականութիւնը պերճանքէ չախորժիր: Իր հեքնութիւններուն մէջ, իր հակագրութիւններուն մէջ, իր սրախօսութիւններուն մէջ մանաւանդ կը ջանայ գնել իր տաղանդին բոլոր ճարտարութիւնը. հոգին կը փնտռէ աւելի քան մարմինը, ձեւէն աւելի նիւթն է որ զինքը կը զբաղեցնէ: Իր բառարանը շատ սահմանափակ է, և նոր բառերու դիմելու պէտք ալ չզգար:

Եւ սակայն որչա՛փ նոր է իր այդ անխառն պարզութեան մէջ. ի՞նչ չէնշող բնութիւն մը, խնդալու ու խընդացնելու պատրաստ միշտ, ի՞նչ առողջ տեսութիւններ ամեն խնդրի վրայ, ի՞նչ անվիանդ տրամաբանութիւն մը, որ միշտ կանգուն կը հսկէ ամեն մէկ տողին վրայ:

Պարոնեան եթէ Մեղորէն ետքը արտադրած իսկ չ'ըլլար այն հրաշակերտները որոնք իր անունը պիտի անմահացնեն, աներկբայ իբր խմբագիր Մեղորի նշանակելի հետք մը պիտի ձգէր հայ լրագրութեան պատմութեան մէջ:

ՀԱՆՏ ԱՍՏՏՈՒՐ

ԸՆԿՈՒՋԻՆ ԿՈՂՈՎԸ

Աւելի իր յաղթ հասակը, քան իր ընկուզի կողովը կը պտըտցնէր Մերկիկ Մէօ-հիւրտարի պարտէզին մէջ. մսեղէն աշտարակ մը այդ Մերկիկը. ի տես իր տիտանեան հասակին պիտի փորձուէիք կարծել թէ այս ընկուղավաճառը իր բոլոր կեանքին մէջ պէտք չ'էր ունեցած ընկուղենիի մը չուլլուելու, պիտի բաւէր որ ձեռքը երկարէր անոր որպէս զի պտուղը քաղէր, այդ հսկան, այդ գողիաթը:

Կտրիճներու աւանդական տիպարը չէր

ներկայել Մերկիկ, յաւիտենապէս հրաշուել, թխահեր ու թանձրայծն : Իր պիրկ նրբաթեղ ու կծծութեամբ բուսած պիւտերը տոհմիկ սերունդէ բան մը կը յիշեցնէին ձեզի : Մաղերը, կարծես իր ծախած ընկուզին ջրովը ներկուած, խարտիչուկ՝ գիտա-կոյտ մը կը ձեւայնէին զլիսուն յետաս-կողմը. այս գիտակոյտին վրայ արհամարհոտ մասներով անցուցած նետած էր սեւ ու մանրադիտական ֆէս մը, ետեւէն քիչ մը կոտորած, կարծես անկէ կախուած անհուն ծուպին ծանրութեանը տակ. յոնքերը ազեղ-նաձեւ ու ջղուտ բան մը ունէին, չքաւու-րելով իր արհամարհոտ աչքերը ուր կը ցո-լար զօրաւոր այլ դանդաղկոտ անասնոյ մը վեհանձնօրէն անխռով ակնարկը :

Բնական զգուանքով մը որ յատուկ է հուժկու մարդուն ամեն դժուծ ու կեղտոտ բանի համար, միշտ կաթնթոյր շապիկ մը կը հագնէր Մերկիկ, պերճ ծալքերով որ կը կաղապարէր իր ասպարակերպ լանջքը, իր թափանցիկ հիւսուածքին տակ՝ ի տես դնե-լով ցորենամորթ զնդերներուն զողոզնունե-րը : Լաշնի յարդադոյն տարաւոր կ'իջնէր իր անվերջանալի սրունգներուն ու սեւ կի-սակօշիկներուն վրայ, որք աւելի պայծառ ցոյց կուտային իր ձերմակ գուլարներուն անրթ մաքրութիւնը :

Բայց այս ամենը մօտէն. իսկ հեռուէն, տեսողութեան պատրանքով մը, ձեզի ա-նանկ պիտի դար թէ ձերմակ պատառով մը քօղարկուած այդ լանջքը, որ կը ծածա-նէր այդ նստուկ բազմութեան վրայ, մար-մարիոնէ կիսանդրի մը եղած ըլլար, որ յան-կարծական կեանքով մը չնչաւորած, կը տա-տանէր, կը ճօճար հիմայ, այս կամ այն կողմ :

Եւ իր մարմնական կորովի բոլոր այս պաճուճանքը, ոյժի բոլոր այս ցուցամով զեղիւթիւնը զիտէ՞ք ինչու համար, զիտէ՞ք. — անոր համար որ իր վեր սոթած արուրէ դաստակէն, մանրիկ, անհեթեթ կողով մը կախէր, իր ընկուզի կողովը. աւելի ծիծա-ղելի պատկեր տեսած չ'եմ երբեք. ճշմա-րիտ ծաղրանկար մը կը յիշէ՞ք հաւկիթը զով բարեկենդանին չորս հուժկու բեռնակիրներ բեռի մը բովանդակ յաւակնութեամբ, տա-կառի մը ձողակներուն վրայ կը կրեն, կը տանին փողոցէ փողոց, հեւ ՚ի հեւ . . . :

Այս ճէպէշէն, — դուք ընկուզավաճառ անուանեցէք զինք, — իմ հետաքրքրու-թիւնս չարժեց. տարօրինակ ընկուզավաճա-ռը, իր շարժումներուն մէջ վեհանձն հան-դարտութիւն մը ունէր միշտ, որ բնաւ ա-ռեւտուրի տենչը տենչը չ'էր մատնել իր մէջ : Օր մը չէր պոռար իր ընկոյզներուն թարմութիւնը ներբողելու համար, ընկու-զավաճառ լակոսներու հոգէառ ճիշերովը : Թաւ ու խորունկ ձայնով մը միակ Գ-րէֆֆէս մը կ'արձակէր երբեմնակի, առանց զիմազիծերը խախտելու, կարծես ետին մէ-կը պոռացած ըլլար իրեն համար. խօսող խա-մածիկները տեսնօր էք : Եւ սակայն իր ձայնը կը բաւէր տիրապետելու զբոսավայ-րին բոլոր զուարթ խոժոկին, ահռելի բամբին պէս որ միակ վանիկ մը մէջ կը խեղդէ խմբ-երգի մը բոլոր արձագանքը :

Հետաքրքրութենէս ու հիացումէս շատ անգամ ընկոյզ առի իրմէ եւ ստիպեցի լա-րեկամներս որ իրենք ալ առնեն : Մեր մէկ նշանին վրայ՝ կուգար կը մօտենար մե-զի Մերկիկը, բայց հանդարտաքայլ, առանց վազելու. եթէ մանրուք չ'ունենայինք, զի-տէինք որ կ'աւրէր. իմ ամենէն՝ կծծի բա-րեկամներուս իսկ մտքէն չ'անցաւ օր մը իր առած ընկոյզները համբել. վստահութիւն ունէին :

Չը մոռնամ, Մերկիկը մենէ ստացած տաճանցներուն համար շնորհակալ չ'էր ըլլար բնաւ. եւ ես իր այս հպարտութիւնը կը սիրէի :

. . . Իմ հիացումս սակայն այդ կտրի-ճին նկատմամբ տակաւ ցաւազին զգացման մը փոխուեցաւ. նախնական մարդու — ուրուն համար ոյժն ամեն բան էր — ժառան-գական բնա՞յդ մըն էր իմ մէջս, որ անհան-դուրժելի կ'ընէր ինծի այս հսկային ստոր ու ճղճիմ այդ վատտակը. չ'եմ գիտեր : Ինծի համար սրտմտեցուցիչ բան մը կը դառնար տեսնել որ, այդ վիթխարի մարդը, իր մեր վրայ ունեցած կորովի անխնայ դե-րադանցութեամբը, մեր մանրուքներուն կարօտ ըլլար, անոնց ա'խը քաշէր : Չէ՛, իր բարձրադիտակ հասակը ա'լ տակաւ հեգնու-թիւն մը կ'երեւար աչքիս, ծաղու պատ-րուակ մը սոսկ, զոր դատապարտեալ էր

ամեն տեղ կրեւոլ իր վրայ, չարաչար նեղուելով ու խպնելով անկէ . ծաղրի զրոյմն էր ան, զոր նենգաւոր բնութիւնը 'ի սպառ զարկեր էր այս մարդուն, չարածճի տղու մը պէս որ մէկու մը վրայ ծիծաղաշարժ պիտակ մը կը փակցնէ ու անով կ'զրօնուու-

Բայց գէթ ինծի համար գոհիկ ընկուղաւաճառ մը չէր Մերկիկը. չեմ գիտեր ինչո՞ւ գործէ քաշուած ըմբիշի մը տպաւորութիւնը կ'ընէր վրաս, որուն մարմնի յաղթանակները կարծես ատեն մը տեսած՝ ա'լ ամեն անգամ որ մանրուք մը սահեցնեմ իր ձեռքին մէջ, իր նկատմամբ պիտի ունենամ այն վեհերոս զգացումը, զոր մէջ մ'ալ մարդ հարստութենէ ինկած մէկու մը օգնելով կ'ունենայ :

* * *

Անցեալ աշնան իրիկուն մը, երբ արդէն ընկուղեանին թոթված է իր վերջին տերեւը, մեր գիւղին շուկայէն կ'անցնէի, բարեկամի մը հետ. այդ բարեկամս Մերկիկին համար իմ ունեցած ուշադրութիւնս գիտէր. շուկային ճիշդ մէջտեղը կանգ առաւ յանկարծ ու թեւէս բռնելով .

— Քուկինդ նայէ :

Նայեցայ իր ցոյց տուած կողմը, գինետան մը դռնէն ներս, գինետան խորը :

Իմ մարդս էր, Մերկիկը :

Գինետան ճշմարիտ նախադահի մը վեհութեամբ անկիւն մը բաղմած էր հիմակ, իր գէմ ունենալով զոգ մը արքանեակներ, իր հրաւիրեալները Գիւղացի քանի մը ձկնավաճառներ օրուան հոգաւոր զգալով շուկային մթնոլորտին մէջ, եկած իրենց ապուշ գլուխները շարած էին գինետան ցուցափեղկին առջեւ, հետզհետէ հաւանողական, ըղձական ակնարկներ նետելով ներս, իրենց գինիի այս եղբոր վրայ, կաթ-եղրօրմէ մը աւելի սիրական. այս մարդոց համար մոլութեան սիրագործութիւններն ալ յաղթանակներ են :

Մերկիկը հագուստ փոխած էր այս անգամ, չազանակազոյն «ապէ» զգեստ մը կը կրէր. ոսկեթել կրկնոց մը կը ծածկէր իր լայն ուսերը, իսկ քէսը ա'լ հիմայ բոլորովին քաշուեր, խպլիկցեր էր :

Անտարբեր վեհութեամբ մը կը ճնկէին կը ճնկէին, անվերջ, անդադար. իրենց առջին ափսէի մը մէջ համադամներու համակ

ցուցահանդէս մը որ մեր որկրամոլութեան յաւիտենական փառքը պիտի մնայ :

Յորեկուան մեծութենէն վերջ, գինետան մէջ հիմայ իրարանցում մը, ճշուճը մը կը տիրէր. գինետան մէկ անկիւնը, գնչու մը — չ'ես գիտեր ինչպէս յանկարծ գտնուած եւ հոն բերուած — իր ռնգային խաչոտ սրինգին ճոխնչը կ'արձակէր, որուն երաժշտական միամիտ նախադասութիւններուն կէտեր գնել կը թուէր բզէզ մը իր թմբուկին թփոտոցովը : Մերկիկը հետզհետէ նոր եղանակներ կը հրամայէր գնչուին, խրոխտանքով, ու ցած ձայնով պատուէրներ կուտար, գինետան մագերը իւղոտած մանչուն. ճշմարիտ մրցում մըն էր հիմակ այս երկուքին մէջ, գնչուն եւ մանչը գերազանցելով գիւրար, գինետան ոգեւորութիւնը իր գերազգուցեանը հանելու : Օրն 'ի բուն գաւառներու աչքին մէջ յուսահատ անշարժութեան մը դատապարտուած շիշերն ու դաւաթները, յանկարծ վար թափփփելով սուր ճիշիւր կ'արձակէին, կարծես ախոռի մը մէջ հանդարտ պահուած ձիւր, մտրակի անաւ կընկալ հարուածով մը խրտչած, մոկգնած : Իսկ գնչուն ֆլեւո-օղէ թոփները ա'լ հիմայ կ'երթային կը զարնուէին կարծես գինետան բոլոր բիւրեղներուն, զանոնք զըզրդելով, զանոնք յուզելով :

— «Էյլէ՛, ապէ, էյլէ՛» . կը կոնծէին շարունակ, անդադար, իրենց թեւով սրբելով պիտերնին, բերաննին : Մերկիկը ա'լ տակաւ սկսած էր լուրջ նիւթերու վրայ խօսիլ, տրամախոհել, ինչ որ այս մարդոց համար իրենց բանավարութիւնը կորսնցուցած վայրկենին միայն կը պատահէր — «Մարդ ըսածդ . . .», եւ կեանքի ամբողջ իմաստախրութիւն մըն էր զոր գինետան այս սրիւտը կը պարզէր հոն, ատենաբաններու ջրին տեղ, օղիի գաւաթը բերնին տանելով մերթ ելաւ յանկարծ ոտքի, իր վարդապետութիւններէն մին գեղեցիկ շարժումով մը հաստատելու եւ ինկաւ մէկէն ու իր վարդապետութիւնն ալ իր հետ, իր խարխուլ ոտքերուն վրայ որք ա'լ չ'էին բռնել «Իս նայէ, աղապաս էս ծառքովս ճաղը տրի, ծառքովս վրան խող նետեցի . . . հասկցա՞ր . . . »

Իր մտերիմներուն հաղորդակցութեանը

մէջ ա'լ բորբոքած կերակար հիմայ . ֆէտը իր ձեռնածուի անկարկի զիրքը ձգած յնկած էր, եւ կրկնոցն ալ ոտքերուն տակ կը տարածուէր իբր գորգ . կը ճնկէր ու կ'ըստիւպէր իր արքանեակներուն որ ճնկէին իրենք ալ . ու մինչ իր ընկերները քանի մը դաւաթով լիկած անձրկած , իրենց աթոռներուն վրայ կը կծկտէին , ինք , Մերկիկը , կարծես կորովի նորոգ փթթումի մը մէջ կը ճառագայթէր :

Իր աչքերուն մէջ, խուսափուկ նուազումէ մը յետոյ, ուժգին ակնարկի մը փայլակը կը սուրար մէկէն , փարտի մը դարձ դարձիկ հայելին պէս , որ վայրկենական խաւարումէ մը յետոյ իր լուսեղէն խուրճը կը ժայթքէ յանկարծ : Բերանը՝ կիսաբաց՝ կարծես հայհոյանք մը ժայթքելու պատրաստ , ու ակռաները՝ ցցուած՝ կարծես բան մը փնտռելով խածնելու համար . դէմքը քրտնափայլ ապիկուած , իսկ կուրծքը բաճկոնակէն գուրս յորդած ինկած , Ֆշֆշալով, ծխալով, կաթնայի մը նման, որուն մէջ օդին իր ոգին լեցուցած էր իբր չողի . կը խմէր, կը խմէր անվերջ անդադար , ու ամեն անգամ որ դաւաթը կը սլարպէր հագիւ լսուող մռնչիւն մը կ'արձակէր, խուլ ու տենդոտ, յափրացեալ հեշտանքի մը հեւքը կարծես : Կը հայհոյէր մանչուն , կը հայհոյէր նուագածու գնչուին , եւ մէկէն իր բարեկամները կը համբուրէր, կատաղութենէ սրտաղեղութեան անհաւատալի փոխանցումով մը :

Իր հրաւիրեալները, ա'լ բոլորովին լոյիկցած հիմայ, իրենց սիկառէթին վառած կողմը սկսած էին բերաննին տանիլ, այրուցքէն ետ ետ ընկրկելով ընդոտտ . մինչ Մերկիկ կը ծաղրէր զիրենք , նոր չիշ մը կը պարպէր խորիտալով , ու աւելի՛ կը զուարթանար , կ'առուզանար, կարծես եթերի ներարկումով մը ոգեւորուած :

Ահագնազդորդ շառաչում մը , եւ ահա պատուհան մը ցրելս ցրելս , ջարդուփշուր ինկաւ ապակիին քմահաճ կոտորուածներով : Մերկիկին քովը վազեցին իսկոյն . ի՞նքն էր կոտորողը . զինեպանք առաջ անցաւ, ճեղքեց հետաքրքրներուն խումբը ու հիմայ Մերկիկին զատուակէն բռնած էր :

Դեռ ձեռքէն չէր զատուած այդ գաս-

տալը, բայց կարծես մորթովը միայն փակցուած ըլլար անոր . քանի մը երակ մէկէն կտրտած էին . արիւնը կը հոսէր կը ժայթքէր կարմիր ձեռնոցի մը փոխարկելով զինեպանին ձեռքը, որ 'ի զուր կը ճնչէր երակներուն վրայ արեան կորուստն արգիլելու համար :

Հիմա, բոլոր գինետունը սոսկումի սառսուռով մը կը զողար, կը զողորչէր . գնչուն լուծ էր . ա'լ չիշերը չէին շաշեր :

Գինետունը կը զողար , եւ ընդհանուր սարսափին մէջ կը մտածէի ես : Թերեւս այդ գաստակէն առաջիկայ տարի ա'լ չը պիտի կրնայ ընկուզի կողով մը կախուիլ , թերեւս :

Այս մտածումը իմ սարսափս ալ կը մեղմացնէր, եւ կը զգայի թէ հիմա ա'լ չ'էի մեղքնար Մերկիկը :

ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

ԿԱՂԱՆԴԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Մեր տարիքը ութէն տասն էր այն տեսնը . հարմնիքի մը գալուն պէս կ'ըլլար մեզի կաղանդի նախընթաց իրիկունը : Ժամը տասներկուքին կը թռչէինք տանիքէ տանիք մենք՝ դպրոցական մանկիկներ , եւ մեր երգիքներէն վար կը կախէինք պայուսակ մը կապուած երկայն չուանէ, եւ կըսէինք .

Ալելուեա, ալելուեա

Մէկ քաղա, մէկ քուլինճա

Տուէք մեզի, ելլայ, դայ :

Պայուսակին բախտը թողուած էր տանտիկնոջ գթութեանը . կա'մ կը լցուէր , եւ կա'մ կը դատարկուէր մեր հանդանակածն ալ : Մէկ երկուժամ կանցունէինք սառնեղէն օդի մը տակ , բուքի եւ փուքի առջեւ , եւ ուր ուրեմն կը զառնայինք տուն գրեթէ փառցած ցուրտէն , սառած ոտքերով ու թաթիկներով : Մեր վաստակը կըլլար քիչ մը չամիչ , մէկ երկու կտոր պատտեղ , քանի մը հատ ալ նուշ կամ ընկուզ , եթէ վերջին անգամ դատարկուած չէր պայուսակը :

Ի՞նչ քաղցրութիւն այդ քանի մը վաստըկածներու մէջ . մանկական հոգւոյ ամէն անմեղութիւնը : Կը պահես , չես ուտեր ,

հետեւեալ օրը անոնց վրայ կը խօսիս, մերթ ընդ մերթ վրան կը նայիս պզտիկ աղջկան մը պէս, որ իր խրճիկը (պէսպէֆ) կը փայփայէ կուրծքին ու թեւիկներուն վրայ, անոր որրան կըլլայ, մայր կըլլայ, հոգի կըլլայ: Այս ամէնն այն պատճառաւ, որ բնաւ պտտճառ մը չունի:

Կը դառնանք տուն: Օրուան նուիրականութիւնը մեզի ներողամիտ կըլլայ. ո՛չ մէկ յանդիմանութիւն մեր պայուսակի համար, զի վերջապէս մութացկանի տողարակ չէ. օրուան պատմութիւնն է միայն. ապա թէ ոչ մեզի ի՞նչպէս կը ներէին որ տանիքէ տանիք երթանք, եւ բան մը չունեցողներու պէս՝ պայուսակ կախնք երգիքներէ վար: Իրաւ, այդ պայուսակը մեր ցո՛ւրան ալ, սառն ալ, ձիւնն ու փոթորիկն ալ կ'անուշէր:

Այդ մանկական պայուսակները տակաւին այսօր ալ կը պահեն պատմական աւանդութիւն մը: Մեր մամիկներն այնպէս կը հաւատան որ Յուլիանոսի չուն ժամանակ ամէն կին կուտար ինչ որ ունէր, իր ապարանջանն, արծաթ կամարը, ճակտին ոսկիներու շարքը, որք կը մթերուէին մառանի մը մէջ: Աստուք կեանքի իբրեւ փրկանք պիտի տրուէին եթէ Յուլիանոս ողջ դառնար:

Յուլիանոս կիյնայ Տիդորոսի առջեւ, եւ խնդութիւնը, արեւելքէն դարձող արեգակին շողերուն հետ, շուտով կը հասնի եւ կը փարատէ միտքերն ու սիրտերը տանջող մթին խուճապները:

Հիմա պէտք էր իրենց տէրերուն դարձնել կանայցի հաւաքուած զարդերը:

Ամենքն ալ տուած էին խառն ու անկարգ. ո՛չ ոք զիտէր ո՛ր զարդարանքը որո՞ւ էր. Իւրաքանչիւր ոք կը կախէ մթերանոցին երգիքէն վար պայուսակ մը, եւ հրաշքով, անշունչ նիւթերը կենդանացածի պէս, կեղևն խառնակոյտէն եւ կը մանկն իրենց տիրոջ պայուսակը:

Այդ պատմութիւնն է զոր հայ մանկութիւնը պահած է իր սուպրակովը. եւ մենք աւանդութեան խաղը կը խաղայինք:

* *

Մեզ ի՞նչ կը պակսէր: Շէն ըլլան մեր

օրհնուած այգիները, օրուան ամէն միրգերն ալ լիքն էին մեր սեղաններու վրայ: Այո, լիքն են սեղանները, պապիկն ու մամիկ անոնց ամենէն գեղեցիկ զարդը կը չինեն, մին իր սպիտակախառն մորուքովը իբրեւ օրհնութիւն տանը, եւ միւսը խնամող ձեռքովը իբրեւ նախախնամութիւն: Սեղանը կեանքի երկու ծայրերը միայն կը պատկերէ, — պապիկով մամիկն ու թոռնիկները. անոնք դողդոջուն մաշած ատամներով ու տառապանքներով, ասոնք թրթռուն եւ թռչկոտ թիթեռնիկներու պէս: Այդ երկու ծայրերուն մէջ ահագին խրամ մը կայ բացուած, — ծերերու որդիներն ու թոռնիկներու հայրերը մէջտեղը չկան:

Ո՛րքան ալ մարդ ինքզինքը ջանայ զոսպել, որ Ամանորի առաջին ժամերը չվրդովէ դառն յիշատակներով, կընկճի բնութեան բուռն պահանջքին տակ, եւ արցունքը կիյնայ պապիկին ու մամիկին կենած փոթթուած այտերէն վար: Ուզես չուզես, պիտի մոռնաս՝ քանի մը վայրկեան՝ օրն ալ, աւանդութիւններն ալ, եւ մտքով պիտի թռչիս կորսուածներու ետեւէ. — Թիֆլիզէն մինչեւ Կորնթոսի պարանոց, Սուէիչէն մինչեւ Բանամայի ջրանցքը:

Եւ հարկ չէ որ մարդ գրագէտ կամ գիտուն ըլլայ այդ ցաւերն զգալու իրենց բոլոր դառնութեանը մէջ. Կրնան զգալ ծերութիւններն որ յաջորդ Ամանորը գուրջ չգանէ զիրենք այդ սեղանին վրայ, եւ իրենք թափուր թողած ըլլան իրենց տեղը ճամբորդներու պէս, որ արգէն ուշ ալ մնացած կը համարուին:

Կը խռովի սեղանը, եւ պզտիկներ, հրդեհի մը առջեւ խնդացողներու պէս, անգէտ են այն հոգեկան վիշտերուն, որոնք սուր խայթուածներու պէս կը վիրաւորեն ցամքած, պառուած կեանքեր, կեանքերն այդ տուններուն՝ մեր ձիւնեղէն կոյտերուն ու սառոյցներուն տակ:

Կարճ եւ թեթեւ քունէ մը ետքը, որ իրիկուան ցաւերն ու մանկական ծիծաղները կը մարէ կածկըտուն մոխրակուտի վրայ տարածուած մթին ստուերի մը պէս, կէս գիշերուն դուռներէն դուրս կը սողան հացի խոշոր ծրարով կին մը եւ մանկիկ մը Պո՛ւ . . . սարսափելի է այդ դուրսը. կամ

բուքն է որ մշուշին հետ խառն բնութեան արհաւիրքը կը բազմապատկէ, կոռնայ, ձիւնեղէն փոշին կը սրակէ, եւ կամ, սառուցիկ լուսնի ճերմակին տակ, անեղբ սպիտակութիւն մը:

Մեր ուղեւորները կը թափին գիւղին մօտակայ աղբիւրները. հացերը կը թրջեն ջինջ ջրին մէջ, որ գիւղական կեանքի ամէն պղտորութեանց մէջ ինք միայն անապակ մնացած է: Յետոյ, — կը հանուին որպէս թէ ամրան տաք օր մը ըլլար, եւ աղամական մերկութեամբ կիցնան աւազանին մէջ ու կը լողնան ինչպէս ծովային բաղնիքներու մէջ յուլիսին:

Այդ լուացքը դարման է ամէն ախտերու. առողջները զերծ կը մնան գլխի հիւանդութիւններէ. իսկ ախտաւորները, որոնք ամբողջ տարին չարչարուած են տենդէն, բժշկութիւն պիտի գտնեն այդ սառն ջրերուն մէջ: Եւ յետոյ, կը մագլցի հիւանդը ծառն ի վեր, եւ ուժգին ցնցելով կը թափէ ձիւնի դէզը ձիւղերէն, այն խորհրդով որպէս թէ ըսած ըլլար:

Յաւեր, թափեցէք ձիւնի պէս:

Եւ, գլուխէդ վար սափոր մը պաղ ջուր թափածի պէս, սառնեղէն փշրանքները օձիքէդ ներս կը տարածուին լանջքիդ ու կռնակիդ վրայ: Այս ալ կաւարտի, եւ գիշերային այդ ուխտաւորները (*), դեռ ժամկոչ չեւած, կը մտնեն տուն՝ թրջած հացի ծրարով: Այդ հացէն պիտի ուտեն առաւօտուն անեցիքն ամենքն ալ իբրեւ համադեղ. կովը, եզը, գոմէշը եւ ոչխարն ալ իրենց բաժին ունին անկէ:

Եկեղեցիները կը լցուին շատ կանուխ. Բայց թէ ինչ կաղօթեն հարսներ, պառաւներ, ալեւորիկներ մեր հինցած պատկերներու եւ մաշած սեղաններու առջեւ, չեմ գիտեր. չեմ գիտեր նաեւ այն ջերմ ուխտերը, որոնք վառուած մոմերու բոցեղէն թեւերով կը նետուին մեր սուրբերու առջեւ, միայն գիտեմ թէ շատ դժուարին է գտնել սիրտ մը, որ իր մաղթանքին հետ աղչոր կաթիլը չխառնէ:

(*) Այս մարդիկ չեն երթար այդ դէշեր աղբիւրը:

Ժամէն ետքը Ամանորի առթիւ կզկի տնական սրտաշարժ արարողութիւն մը, որուն մէջ կը պահուի նահապետական կեանքի պատկեր մը: Հարսներն ու թոռնիկները կը մօտին կարգաւ եւ կը համբուրեն ծերուկ տանտիրոջ ձեռքը եւ օրհնութիւն կառնուն: Ա՛լ օրհնութիւն տանն ու տնեցիներուն, օրհնութիւն գոմշուկին, եզան, ոչխարին, զորս ցուրտն ու ձիւնը հինգ վեց ամիս կը բանտարկեն միեւնոյն յարկերու տակ: Ծերունի՛դ պատուական, չունի՛ս ուրիշներ, որոնց վրայ կը փափաքէիր դողդոջ ձեռքդ դնել ու Ամանորի օրհնութիւն անձրեւել՝ ծաղկին վրայ ծաւալող ցօղերու եւ մութին մէջ արծակուող շողերու պէս: Այո, թարմ ու առողջ կեանքեր կը պակսին, եւ ահա օրհնութեամբ բացուած սրտաշարժ տեսարանը կը փակուի արցունքով:

Հետեւեալ օրը նոյն կեանքն է դարձեալ, եւ Ամանորը բան մըն ալ բերած չէ:

* * *

Քսան երկու տարի է անկէ ի վեր. կաղանդի ամէն նախընթաց իրիկունը՝ կ'արթննան մտքիս առջեւ մանկական այդ յիշատակները, քիչ մը աղօտ, քիչ մը պղտոր, եւ ինչ որ ջինջ ու անջինջ մնացած է անոնց մէջ՝ պապիկիս արցունքն է իր ճերմակ մորուացը թեւերուն վրայ, եւ ինքն է, ութսունամեան կեանքի պատկեր մը, կարօտի եւ ցաւերու մաշած չրջանակի մը մէջ:

ՀՐԱՆԴ

ՖԻՄԻ ՅԵՇԱՏԱԿԸ

Պապէն՝ որ աշխարհիկ գրականութեան ու կենդանի գրիչներու էր միայն պատկեր՝ կը դառնայ յանկարծ սիրեցեալ գերեզմանի մը պատկերն ու յիշատակ մը կ'արթնցունէ մտքերնուս մէջ, այնքան տխուր որքան անուշ. — յիշատակն այն ծաղկատի կնոջ որուն կեանքն եկաւ անցաւ իբրեւ ստուեր մը անապատին վրայէն կամ արեւու ճառագայթ մը հովտին խորէն, անըմբռնելի երանութեան մը հետքը թողլով իր մտերմաց չրջանակին մէջ: Հաղիւ երկու տարիներ սահեցան այն գարունէն ի վեր

որուն գեղածիծաղ մէկ օրովը, մարգերու եւ ծաղկանց մէջէն հետեւեցանք իր սպիտակ դագաղին մինչեւ ստորոտը բլրոյն որ կը հովանաւորէ Օրթագիւղի գերեզմանատունը, եւ անկից ի վեր ա'լ բան մը չի գրուեցաւ իր վրայ: Եւ սակայն կանխահաս տաղանդ մըն էր Մաքրունի Չալեան՝ մեր գեղեցիկ սեռի գրող դասուն մէջ, մանկամարդ հասակի մը բոլոր աւելնումը ու կեանքի հրապոյրներուն յաղթող եղական կամքով որք կը մրցէին գոգցես իր սրտին ու մտքին մէջ: Աւելը տեղի կուտար կամքին, բանաստեղծութիւնը կը յաղթուէր գիտութեան, կամ աւելի ճիշդ՝ այդ քսանեւութ տարեկան կինը բանաստեղծութիւնը գիտութեան մէջ կը փնտռէր: Դեռ ժամանակ չ'ունեցած աւարտելու աստղաբաշխական ընդարձակ ուսումնասիրութիւն մը որուն առաջին էջերն հազիւ գրած, այդ գործն ալ իր շատ մը խորհուրդներուն պէս մնաց ծրագիր մը զոր ուրիշ կեանքի մը մէջ իրագործել երազեց, ու չ'արթնցաւ այդ տիւր երազէն: Եթէ ապրէր Ֆիմին, նորօրինակ երեւոյթի մը ականատես պիտի ըլլայինք մեր գրականութեան մէջ: Գրիչ մը որ վիպակներով ու բանաստեղծութեամբ կը սկսի եւ գիտութեամբ կը վերջացունէ: Իր աշխատութեան խուցին մէջ, Յլամառի մօտի պատկերը կը կախուէր Թէրզեանի պատկերին քով, Միւսէի քերթուածները կիշնէին գրագարանին խորը ու Պիւֆօնի հաստիները կը տարածուէին սեղանին վրայ, մանրադէտնեղու, հանքարանական գրքերու եւ տարրալուծական գործիքներու քով: Ծառի շիւղ մը, թռչունի մը փետուրը, աւազի մը հատիկը կամ ծովափէն ժողովուած խիճ մը խորհիլ կուտային անոր: Եւ այս ամենը կը պահէր իրեն համար, իր ներքին կեանքին համար: Իր առանձնասենեակին գաղտնիքն էր՝ գիտնականի այս նախապատրաստութիւնը: արտաքուստ կը մասնակցէր գրագիտական ակումբներուն, սրահներու մէջ կը յարգուէր իր ընկերական ձիրքերովը, իր նրբամտութեամբը, իր գուարթութեամբը: Գրիչը կը գուշակէին այդ գուարթութեան ներքեւ թախծութիւն մը՝ խորին, անյաղթելի, զղուանք մը՝ կեանքի վիշտերէն: Գրեթէ փիլիսոփայ մը՝ յանձին այդ ծաղկաթիթի կնոջ:

Գուրգէն էֆէնտիի գործին հինգերորդ պրակը կը կենդանացունէ յանկարծ այդ եղական դէմքը ո'չ միայն անոնց աչքին որք կը ճանչնային զինքը, այլ եւ անոնց որք կարդալով երբեմնակի երեւցող Կնոջ Օրթագիւղ՝ խորհած էին թէ ո'վ էր այդ զգայուն ու միատեղական տողերը ստորագրող Ֆիմին: Օրիորդ Մաքրունի Ֆռէնկեան՝ իր մտերմութիւններէ մին՝ քանի մը համակրական տողերով՝ Պապիւրին կը յանձնէ հատուած մը այդ Օրագրէն, որուն քանի մը մասերը արտատպելու հաճոյքին չեմ կրնար դիմադրել: Պատական գործի մը մէջ նոր երեւցող այդ գրական տողերը թո՛ղ իրենց տեղն ունենան նաեւ գրական հանդէսի մը մէջ, եւ երկուքին ընթերցողներէն ալ հաճոյքով կրնան կարդացուիլ:

Օրագիրը գրուած է 1885 Նոյեմբեր 23ին:

«Ամէն օր իղձ մը կը վերածնի յիս, եւ տենչ մը կը մարի ընդհուպ սրտիս մէջ... եւ ծրագրի մը աշխատակից բարեկամուհիս ալ կը մտածէ՝ թերեւս՝ թէ օր մը պիտի մրցիմ իրեն հետ գիտութեան ու ուսման կրկէսին մէջ, բարէ՛...»

«Սակայն վայրապար կը հառաչեմ վերացական մարդու մը պէս. լաւ եւս է ներկայէն օգտիլ միշտ, ապագայ վշտին դէմ դնելու համար եւեթ»:

«... Ներկային ինձ վերապահել իմ սկզբունքս եղած է. բայց ներկային ժամանցը սահմանափակ է. անցեալ իղձերդ իրագործուած են, պահ մը յետոյ ընելիք որոշումներդ այնքան իրականալի չեն թուիր միշտ. առ այս մտքին մէջ կամուրջ մը կը ձգեմ ներկայէս ապագայիս կապուած: Թող որ յամրաքայլ ընթանամ այդ կամուրջին վրայէն»:

«... Ամբողջ գրիչերն հսկեցի. հազիւ ժամէ մ'ի վեր թիկնաթոռիս մէջէն յափշտակած էր զիս Մորիէոս, նիրհելու անդաւլի տենչ մը զարթոյց զիս յանկարծ: Գլուխս մագերուս տակ թաղուած էր. թմբի մը կը ծանրանար վրաս. գրչեռաշրջիկի մը պէս դէպ այն աղմուկը վաղեցի առ խարխափ. ակնթարթի մը մէջ դիտակիս կը բաղխէի»:

արձանացայ անդ՝ ուշս ամփոփելու համար. քիչ հտքը ձեռքս գործիք մ'առած էի ան- զգալապէս ու կը դարձնէի. ուշադրութեամբ գննեցի զայն . մեծ ժամացոյց մէր որ կը ձոնչէր. չէ, չէ, այն շփոնդը կը լսեմ որ պահ մ'առաջ թիկնաթոռէս ոստնուլ տուաւ ինձ . . . իննցի պէս սենեկիս շուրջը դիտել սկսայ . անկողինը քակուած չէր տակաւին, հետեւաբար այն գիշերը պսակած չէի եր- բէք . բայց ժամը առաւօտեան 6ը կը նշա- նակէ այս գործին, եւ այն շփոնդն որ զիս զարթոյց՝ զիտարանիս մօտ կը կոչէր զիս . — 50 մանկերորդ կորուսած էի Արուսեա- կին նուիրելու ժամէս. ո՛հ, այս մազերն ալ տանջանք են ինձ. զայնս գլխուս վրայ ամ- փոփելու համար ծամակալ մը կ'առնեմ եւ դէմքս ու մասնաւորապէս աչքս կ'ազատեմ այդ վերաբերուէն, կը խոստովանիմ, քիչ մանրծելով այն անձը որ երբեմն մազե- րուս գերին եղած էր եւ թէ ստիպուած էի իւր յիշատակը յարգելու համար չկտրել զանոնք երբէք :

«Կապարեայ մ'ունիմ ի ձեռին եւ թերթ մ'ալ թուղթ՝ Արուսեակի վրայ եղած հաշիւ- ներ ամփոփելու համար այդ թերթի վրայ, կը բանամ զիտակս եւ նորա սխաւառակն առաւօտեան Արուսեակին կը դարձնեմ . . . ո՛հ, երկինք ամպոտ են եղեր, եւ անհնար է փորձ մ'իսկ ընել ամպոյ մէջէն նորա հետքն իսկ նշմարելու . — մէն մի իղձ վի՛հ մ'ունի ընկղմելու համար :

«Տրամելու եւ յուսահատելու տկարու- թիւնն աքսորած եմ սրտէս հինգ տարիներէ ի վեր . առ այս անտարբեր կը վերադառ- նամ կրակարանիս մօտ, խարոյկը կ'արծար- ծեմ, կաղնւոյ մը կսճղ կ'առնում ձեռքս եւ կը խոկամ . . . »

Կենսագրութիւն մը անբաւական պիտի ըլլար Յիմին ճանչցնելու . իր կեանքը՝ իր խոհերուն ու իր գրուածներուն մէջն էր իր Օրագրի մէկ հաւաքածոյն՝ եթէ հրատարա- կուի՝ հոգեբանական վէպի պէս բան մը պիտի ըլլայ, ինչպէս եղաւ կեանքն այդ վա- դամեռիկ կնոջ, որ ջղային ախարն դէմ կը մաքառէր մորֆինով, որ իր թաքուն վիշտե- րը կը թաղէր լուրջ ուսումնասիրութիւննե- րու մէջ, որ զգայուն սրտի մը ալեծփումը կը հանդարտեցունէր արհամարհանքի մը

մէջ, դառն ու մեղամաղձոտ :

Եւ օր մը, ի դարձին Մօտայէ, ուր կեր- թար Եղիային նկարագրութիւններէն ազ- զուած, ա'լ անկարող զգաց ինքզինքն ան- գամ մը եւս այցելելու այն հմայիչ ծովա- փը 1890ի գարնան սկիզբն էր, կարծեմ : «Որքան կը չրջիմ Մօտային ծառերուն տակ՝ այնքան աւելի կենդանութիւն կը գտնեմ՝ Տէմիրճիպաշեանին գրուածներուն մէջ ու կը սիրեմ զանոնք», կըսէր Այս եղաւ իր վերջին մտածումը գրականութեան ու բա- նաստեղծութեան վրայ, ու այնուհետեւ իր հիւանդութեամբը միայն զբաղեցաւ . տառապաղին դարձաւ Օրթագիւղ, իր սի- րելի ծննդավայրը, ուր՝ ամիսը չբոլորած՝ ակնաւոր բժիշկներու խորհրդակցութեան պահուն, ինք իր վճիռն արձակեց անկող- նոյն մէջէն, առանց անոնց եղբակացու- թեան սպասելու, կիսատ ձայնով մը ըսելով բժիշկներուն .

— C'en est fait de moi .

Եւ իրաւ, սպառած էր ոյժը կեանքին, ու մահուան օրհասը կը հասնէր տակաւ առ տակաւ : Իր գեղեցիկ վարսերը, որոնց համար կը գրէր թէ «գլուխս մազերուս տակ թաղուած գտայ», հիւսայ կը թաղուէին իր գեղեցիկ գլխուն տակ որ կը ծանրանար՝ գերեզմանին մէջ իջնելուն պատրաստուելով կարծես, ու աչքերն, այն երազուն ու վառ աչքերը, կը մթաքնէին՝ մեծ խաւա- րին վարժուելով : Ի՞նչ անջրպետ կայ ան- կողնէն ի գերեզման . տիեզերք մը՝ ուր ակնթարթի մը մէջ կ'անցնուի :

Ամալերջի Մասիւն մէջ, ուր Պէշիկ- թաշեանին ու Ազամեանին խոհերն ու քերթուածները կերելին, կուգամ խառնել յիշատակը Յիմին որ թէեւ ոչ անոնց պէս մեծ անուն մը թողած, բայց անծանօթ մը չէր բոլորովին արդի գրականութեան համար եւ թերեւս աւելի ըլլայ ծանօթ, երբ գրուի իր վրայ եւ ամփոփուին իր նամակներն ու Օրագրին նոր հատուածները : Կնոջ կեանքը որ այնքան անհուն նիւթ կուտայ վիպա- սաններուն ու հոգեբաններուն, ո՛չ ապա- քէն աւելի կենդանի գոյներով կը նկարուի ու կ'ըմբռնուի երբ կին մը ինքն իսկ կը գրէ իր խոհերը, ըլլան տառապանքի թէ երջան- կութեան խոհեր :

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

LE VASE BRISÉ

Le vase où meurt cette verveine
D'un coup d'éventail fut felé,
Le coup dut l'effleurer à peine,
Aucun bruit ne l'a révélé.

Mais la légère meurtrissure,
Mordant le cristal chaque jour,
D'une marche invisible et sure
En a fait lentement le tour.

Son eau fraîche a fui goutte à goutte,
Le suc des fleurs est épuisé,
Personne encore ne s'en doute,
N'y touchez pas, il est brisé.

Souvent ainsi, la main qu'on aime
Effleurant le cœur, le meurtrit,
Puis le cœur se fend de lui même,
La fleur de son amour périt.

Toujours intact aux yeux du monde,
Il sent croître et pleure tout bas,
Sa blessure fine et profonde,
Il est brisé, n'y touchez pas.

SULLY-PRUDHOMME.

ԽՈՐՏԱԿԱԾ ԱՆՕԹԸ

Անօթն ուր այս ծաղիկ մարի,
Ճեղքեց՝ զարկ մը հողմահարի.
Հարուածն հաղիւ չօշափեց զայն,
Չի լսուեցաւ փոքրիկ մէկ ձայն:

Բայց թեթեւ վէրքն այդ՝ խածնելով
Բիւրեղին կուրծքը ամեն օր,
Հետքով մ'անտես եւ ապահով
Յուշիկ դարձաւ չուրջը բոլոր:

Իր զով ջուրն է կաթ կաթ հոսած,
Ս'լ ծաղիկն հիւթը ցամքած է.
Տակաւին մարդ չունի կասկած,
Մի՛ դպչիք, նա խորտակած է:

Յաճախ այսպէս ձեռք մը սիրեալ
Շոյելով սիրան՝ հոն վէրք բանայ.
Յետոյ ինքնին պատուի սիրան ալ,
Ու իր սիրոյն ծաղիկ չորնայ:

Միշտ աշխարհի առջեւ ժպտուն,
Զգայ իր վէրքը յարածուն՝
Նուրբ եւ խորին, ու լայ գաղտնի,
Նա խորտակած է, մի՛ դպչիք:

ՍԻԻԼԼԻ ԲՐԻԻՏՈՄ

Թարգ. Մ. ԱՃԷՄԵԱՆ

ԲԱՐԻՋԷ ԴԱՐՁՈՂ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴՆԻՍ

Երկրագունդը ունի իր այլ եւ այլ խաւերուն վերադրութիւնը, եւ ընկերութիւնն ալ՝ իր սերունդներու յաջորդութիւնը՝ զորոնք ոչ նուազ կարեւոր է մի առ մի ճանչնալ ու բաղդատել, քննելով իրենց սրտին ազդող զգացումները եւ իրենց մտքին տիրող գաղափարները:

Մեր ընկերութեան համար այս սերունդներուն մէջ ամենէն կարեւոր մասն ունի թերեւս այն՝ որ Բարիդէ կը դառնայ մեզ պարբերաբար:

Մինչեւ ցայսօր, Բարիդի է որ կուտանք, թէպէտ ո'չ առաջուան չափով, մեր նորահաս պատանեկութեան ծաղիկը, եւ իրաւունք ունինք — ո'չ, պարտքերնիս է — նստիլ խորհելու թէ ինչ վիճակի մէջ կը դարձուի մեզ այդ ծաղիկը, լիափթիթ ու կենսավառ՝ մեր պարտէզը ճոխացնելու, թէ անդոյն ու մարած՝ իր տեսքովը սիրտ առկաւ ընկնելու:

Պէտք է հաստատել թէ Բարիդէ դարձող մեր երիտասարդութիւնը — քիչ բացառութեամբ — բոլորովին տարբեր հանգամանքներ կ'ընծայէ ուշադիր դիտողի մը աչքին, քան սերունդ մը առաջ զայն կանխող երիտասարդութիւնը, Սերվիլէն, Ալաթօն, Վահան, Ռուսինեան, Մխաբեան, Արամեան եւ այլք, իրաւ, նոյնքան կ'ազդուէին մեծ ոստանին պատկառարկու եւ մեծափառ բարձրութենէն, սակայն անոր պարունակած ազնիւ ձկտումները, անոր հիմը կազմող հաստատուն ձիւքերը իւրացնելով կը դաւնային, ռգեւորած եւ եռանդուն, ոչ թէ սրտաթափ, պահելով միշտ իրենց ինքնութեան զգացումը աննուազ, եւ մտադիր՝ իրենց երկրին ու հանրութեան յառաջացման նպաստարար միջոցներ ընելու իրենց ըստացած ուսումը եւ զարգացումը:

Նոր սերունդը կը դառնայ ընդհանրապէս՝ հապճեպով՝ սովորական քննութիւնները անցունելուն պէս՝ առանց քիչ մըն ալ կենալով լոկ անհրաժեշտէն անդին անցնելու իրենց ուսումնասիրութեանց մէջ, Բարեգի

մտաւորական կեանքը մասնակի եւ երեսանց ըմբռնած, անոր պարզած պերճահանդէսին սոսկ նիւթական երեւոյթէն շլացիկ, անոր խոստացած վայելքներուն մէջ հեշտականին եւ զբօսականին ուշադիր, հաստատորոշած՝ խմաստուն շահարարութեամբ իրենց անձին համար միայն գործածելու իրենց սորվածը ու ստացած փորձառութիւնը, առանց մտաբերելու ասոնց պաշարն աւելցնելու մտքի անյադ եւ վեհ հետաքրքութեամբ Ա՛լ չեն ընել մտքի ո եւ է նոր ջանք իբրեւ թէ ուժաժափ ըրած ըլլային զիրենք իրենց ուսանողական կեանքին ջանքերը, ինչպէս կընէ ամէն ջանք որուն ուղղիչ չէ սէրը :

Ի՞նչ է իրենց նպատակը, Որքան կարելի է չուտ եւ շատ շահիլ զրամ եւ նորէն դիմել Բարիդ, այս անգամ կատարելապէս հանելու վայելքներու ծուծը, եւ նախորդ անփորձութեան կամ առ հարկի զրկանքներու վրէժը լուծելու : Ծրջահայեաց աշխարհաքաղաքացի վայելող մը ըլլալէ անդին չ'անցնիր իրենց կեանքի փորձառութիւնը :

Իրենց ներքին այս տրամադրութեամբ, անխոյժ աչքով կը դիտեն հանրային ամէն ձեռնարկ եւ հաստատութիւն, չեն հետաքրքրուիր երկրին պարագաներով ու պայմաններով՝ որոնց ճշգրիտ ծանօթութիւնն անհրաժեշտ պէտք է ամէն անոնց որոնք կ'առաջադրեն աշխատիլ յօգուտ երկրին ու հանրութեան :

Լրագրութիւն, թաղային կամ վարչական կամ ուրիշ հանրօգուտ պաշտօն իրենց համար նշանակութիւն չունին . նոյնն էր իրենց համար եթէ գոյութիւն իսկ չունենային : Բայց նոյնը չէ Բարիդի թերթը զոր կ'ստանան իրենց սիրելի քաղքէն հետաքրքրուելով անոր պարունակած ամեն լուրերուն եւ անուններուն, ֆրանսացի մեծ անձնաւորութիւններէն սկսելով մինչեւ յետին երգչուհին, լափելով առաջնորդող յօդուածին մինչեւ ամենէն աննշան մանրագէտը :

Դրախտէ հանուած Ադամներու կը նմանին, սա տարբերութեամբ որ իրենց զրախտին մուտքը չէ արգիլուած հրեշտակներէ այլ միայն ոսկիէ բանալի մը կը կարօտի բացուելու :

Այսպէս զիրենք իրենց ազգակիցներուն հետ կապող միակ կապն է շահը, եւ բաւական մեծ պէտք է ըլլայ այդ շահը որպէսզի կապը ամրապինդ մնայ : Պէտք է գէթ քանի մը պատիլը ըլլայ այն գումարին զոր կարենային յուսալ Բարիդ շահիլ հոն պաշտօնագտնելով, թէպէտ մեծ նեղութեամբ մրցելով ֆրանսացոց հետ, եւ թէպէտ հոն հարկ ըլլար ի՞նչքա՜ր վարել աննշան, ամուլ, առօրին կեանք մը՝ որ անյիշատակ մնալու դատապարտուած է : Ընդունինք թէ պանծալի արդիւնք մը չէ այս : Ի՞նչ թերի կայ բարուց այն նկարագրին մէջ որ լուսոյ աղբիւրը երթալ թաթխուելուն հակառակ բարոյական խաւարի մէջ կը թաղուի : Ծիշաք խօսելու համար, այդ թերին՝ նոյն իսկ նկարագիր չունենալին է, որոշ եւ բարեկազմ, երբ կը դիմեն մեծ ոստանը : Այս պակասութենէն է որ այդ մեծ ազգին մտաւորական զարգացման չեն նուիրել իրենց ուշադրութիւնն ու հիացումը, այլ անոր ստորին հրապոյրներուն :

Յիշենք որ մարդու մը ամենէն կարեւոր հանգամանքը ո՛չ իր զոյքն է, ո՛չ իր դիտութիւնն է, եւ ո՛չ իր գրուածը, այլ իր բարուց նկարագիրը : Երբեմն Բարիդ հաստատուած Մուրատեան վարժարանը այդ զօրեղ նկարագիրը կուտար մեր ուսանողներուն :

Հանգուցեալ Իփէքճեան այդ հաստատութեան տուած անգին բարիքը իր անձնական հսկողութեամբը ընծայել ուզեց, սակայն դժբաղդաբար իր առաջարկութիւնն անլսելի մնաց : Յաւալի է որ անկէ իվել նոյն գաղափարին ձեռներկցութիւն ունեցող կարող մէկը չունեցանք, որ մեր կարծեօք մեր ցոյց տուած թերին լեցնելու համար թերեւս լաւագոյն դարմանն ըլլար :

ԳԱՌՆԻԿ ՖՆՏՔԼԵԱՆ

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՖԻԶԻԲԱ ՊՕՂՈՍԻ ԿԵԱՆՔԻՆ ՎՐԱՅ

Այլաբանական պատկեր մը՝ աջ ու ձախ կողմերը մէյմէկ հրեշտակ կայնած, ձեռքերնին թուղթ ու կարկին . անոնց մէջտեղ մարդ մը, նիհար ոսկրոտ գէմքով,

մագաղաթացեալ մորթով : Մէկ ձեռքը դըրած է գառնուկի մը վրայ որ խաչ կը կրէ եւ միւսով գրկած է աղաւնի մը : Անանուն դժագրիչն այդ խորհրդաւոր պատկերին՝ որ արուեստագիտական բան մը չէ, իր բոլոր կարողութիւնը թափած է աչքերուն վրայ . տխրութիւն, արգահատանք, պատրանք, հայեցողութիւն, ամէն բան կայ անոնց մէջ : Այդ մարդը Ֆիզիգայ Պօղոսն է :

* * *

Գծագրիչը պարտք համարած է իր շինած այս պատկերը լուսարանել բացատրութիւններով . այսպէս, օրինակի համար, թուղթին է՝ «կէդէն Բարոյական հարաբերութեան կարկինը՝ ուղղութեան ճանաչման յարաբերութեան իրաց յաղագայ հասարակ պարտաւոր ճշմարտութեան», եւայլն :

Այս պատկերը բան մը ցոյց կու տայ . գծագրիչին հիացումը, որ գրեթէ պաշտամունքի կը մօտենայ, Ֆիզիգայ Պօղոս պատուելիին վրայ . եւ իրաւ հասարակ մէկը չէր այդ մարդը :

Անցեալ դարու վերջերը ծնած է Ֆիզիգայ : Աղքատ անխնամ, միմիայն իր աշխատանքովն ու խելքով՝ եղած է իր ատենին ամէնէն ուսումնական մարդերէն մէկը : Հարկաւ իր ծննդեան տեղին, թուականին, մանկութեան ու երիտասարդութեան վրայ ծանօթութիւն ունեցող անձեր կան տակաւին, բայց որով հոգն է հատեր որ այդպիսի բաներով ժամավաճառ ըլլայ, երթայ փրնտըն ու հաւաքէ այդ ծանօթութիւնները : Գոնէ մենք ըսենք ինչ որ գիտենք իր վրայ :

Պէտք չէ կարծել թէ Ֆիզիգայ Պօղոս միայն բնագէտ մըն էր . իր ձեռագիրներն ու դանազան հանդէսներու մէջ հրատարակած յօդուածները կը յայտնեն թէ ընդհանուր ծանօթութիւն ունէր թէ՛ գիտութեան ամէն մասերուն եւ թէ՛ մանաւանդ բնագանցական խնդիրներու վրայ : Աւելի փիլիսոփայ մըն էր քան թէ գիտուն մը : Ուսումնականները կը յարգէին զինքը վերջին աստիճան . մտերիմ բարեկամն էր Նիկողոս Հովսեփեանի ու Յակոբ Կրճիկեանի, որոնք նոյն ժամանակի գիտնականներէն էին, ինչպէս նաեւ Զմիւռնիացի Գրիգոր Կոստանդեանի :

Սաղաղիկ կեանք մը կ'անցունէր Ֆիզի-

գայ, կրցածին չափ հեռու փախչելով աշխարհէ, Վէդիւր խան, իր սենեակին մէջ առանձնացած, գրականութեան տուած ինքզինքը : Իր ապրուստի միջոցն էր դաստիարակութիւնը, մասնաւոր առնելով մէջ, ընդհանրապէս զարգացած հասուն անձերու, որոնք կը փափաքէին բարձր ուսումներու հաղորդ ըլլալ :

* * *

Այն ժամանակները (1838-39) բողոքական քարոզիչներ սկսած էին տարածուիլ Պոլսի մէջ եւ Բերա ու Պէպէք գիշերօթիկ դպրոցներ բանալով կը ջանային յառաջ տանիլ իրենց գործը : Ամիրաները ենթադրելով որ Ստեփանոս Պատրիարք անհոգ ու թոյլ ընթացք մը բռնած է այս մասին, Մարգուանի առաջնորդ Յակոբոս Արքեպիսկոպոսը Պոլիս կոչեցին եւ Պատրիարքի խորհրդական կարգեցին :

Յակոբոս իր վրայ դրուած յոյսերն իրագործելու փափաքով, անմիջապէս, ժամանակին լուսաւորեալ զարգացած համարուած անձերը ժողովեց ու մէյմէկ վանք զրկեց որպէսզի ապաշխարեն : Ասոնց մէջն էին Ֆիզիգայ Պօղոս եւ Տէր Սահակեան Յովհաննէս պատուելի, որոնք Կեսարիոյ Ս. Կարապետի վանքը տարուեցան, նոյնպէս Տէր Գէորգ քահանայ Արքունի, որ Թէքիրտաղ զրկուեցաւ տիրացու Յովհաննէսի ընկերակցութեամբ :

Սրտաճմլիկ են այն նամակները զորս գրած է Ֆիզիգայ Ս. Կարապետի վանքէն իր բարեկամներուն : Ինչ որ ամէնէն աւելի ծանր կու գայ իր սրտին իբր ամբարիշտ նկատուիլն է :

Բարեբախտաբար շատ երկար չտեւեց ապաշխարանքը . 1831) զեկտեմբեր 14 ին Ֆիզիգայ վերադարձաւ Պոլիս : Բայց հոս նոր ու դառնագոյն կսկիծ մը կը սպասէր իրեն : Պատրիարքարան երթալով ետ ուզեց ձեռագիրները, զորս կրօնական տեսակետով քննելու համար առած էին իր սենեակէն . պատասխանեցին թէ Ստեփանոս Պատրիարք, որ հրաժարած ու Արմաշի վանքը վերադարձած էր, միասին տարած է զանոնք . անոր զիմեց եւ պատասխան առաւ թէ Պատրիարքարանը կը գտնուին այդ ձեռագիրները . վերջապէս կրկին ու կրկին խնդրանքներէ

վերջ, խեղճ Ֆիզիկայ Պօղոս ստիպուեցաւ հրաժարիլ զանոնք ձեռք անցնելէ : Այդ թանկագին ձեռագիրներն էին . Հայելի ճշմարտութեան, Հրաւեր իմաստութեան, Ներածութեան հաւորոյ, Խորհուրդ Բրիտանի, Բանալի Եկեղեցւոյ, Դիպակ Խորհրդոց աշխարհի և Գաղտնեաց Դիպակաց, Տեսիլ Լուսոյ, Բնութեանութեան, Բանալի Գրոց, Տեսիլ Կենաց, վերջապէս քանի մը գրագէտի փառքը շինելու չափ բան, մանաւանդ մեզի պէս գրողներու որ երեք կտոր յօդուած շարադրելով գրագէտ կ'ըլլանք :

Ս. Կարապետի մէջ Ֆիզիկայ պարապչեանցուցած իր ժամանակը . հոն պատրաստած է, վանականներուն խնդրանքին համեմատ, Խորհուրդ Աշխարհի անունով աշխատասիրութիւն մը :

* *

Ֆիզիկայ իր ձեռագիրներուն այդ անդամանալի կորուստէն ետքը բաւական հոգեկան զօրութիւն ունեցած է կրկին գրելու իր այս նոր գրութիւններն են . Մեկնութեան Ս. Գրոց, Տրամաբանութեան, զոր իր մասէն վերջ՝ եղբայրը Ֆիզիկայ Մկրտիչ վարժապետ տպագրած է 1876 ին եւ Առաքելք թուով 1855 հատ :

Ֆիզիկայ միայն գրաբար չէր գրեր, աշխարհաբար գրուածներ ալ ունի ժամանակին օրագիրներուն մէջ : Ահա՛ նմոյշ մը իր աշխարհաբարէն զոր կը քաղեմ 1855 ի օրագրէ մը .

« Զոգին մտաց գոյութիւնն է աննիւթական իմանալի էութեամբ, որ երկու զօրութիւն ունի, Ա. Շարժումն, Բ. Իմացումն : Շարժումն կեանքը կը պատճառէ սրտին մէջ, խնայմամբ միտքը կը կազմէ ուղեղին մէջ : Կենաց զօրութիւնը հոգեւոյն շարժումն է, որ արմատաբար սրտէն կը տարածուի արեան ջերմութեամբը երակներուն մէջէն անցնելով մինչեւ մարմնոյն բոլորտիքը : Զոգին ուղեղին մէջ՝ մտաց իմացմունքը կը կազմէ գոյութեամբ լուսոյ եւ զգայարնաց մէջ՝ զգացմունքը կը չինէ ճաճանչաճիգ ճառագայթներով . որովհետեւ այս տարածեալ բազմազգիծ ճառագայթները՝ որպէս շառաւիղ լուսոյ գոյութեան մտաց, ջիղերուն մէջ են . մէկ ծայրը ուղեղին միջավայրն է, որ կ'ըսվի կէտ տեսութեան եւ ծայր սկզբն, եւ միւս ծայրը զգայարնաց մէջ կը դա-

դարի, որ կըսվի կէտ հայեցուածոյ եւ ծայր կատարածի : »

Ֆիզիկայի բաւական յօդուածները կան յիշած հանգէսի մէջ . կ'երեւայ թէ զանոնք գրած է Ս. Կարապետի վանքն եղած ժամանակ, զի ստորագրութիւնն է ի պանդխտական վայր Ֆիզիկայ Պօղոս : Այս յօդուածներու նիւթերն են բարոյական, կրօնական, զիտական ու լեզուաքննական :

* *

Մատթէոս Սրբազանի պատրիարքութեան ժամանակ՝ 47 - 48 թուականին՝ Ֆիզիկայ՝ կըթական պաշտօնով գացած է Մոսկի Ս. Կարապետ վանքը . այնտեղ պատրաստած է ընդարձակ կանոնադիրք մը մեր վարչական գործերու համար : Այդ աշխատութիւնը խնդրած էին իրմէ Նիկողոս Զովուեան եւ Յակոբ Կրճիկեան, գործադրելու հոգը վրանին առնելով, սակայն ո եւ է արգիւնք չէ ունեցած : Այդ աշխատութեան մէջ կ'երեւայ Ֆիզիկայ իրեւ օրէնսդէտ - բարոյագէտ մը, արժանի նախակարապետ Ռուսինեանի ու Նիկողոս Պալեանի :

Ֆիզիկայ Պօղոս Մուշէն վերադարձին Վէդիք խանի մէջ հաստատած է քահանայ պատրաստելու համար հոգեւորական դպրոց մը, ուր կը դասախօսէր մինչեւ իր կեանքի վերջին տարիները . հոն, այդ խանը, գրծուծ խշտեկի մը մէջ, մեռաւ Ֆիզիկայ Պօղոս, 1855 յունիս 12ին :

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ՄԵՐ ՀՈՐԻՋՈՆԻՆ ՎՐԱՅ

Երբ այս վերնագրին տակ կը գրեմ, ցաւալի չե՞ որ երեկ՝ գրագէտ եկեղեցականներու, եւ այսօր աշխարհաբար հրապարագրի մը, Գրիգոր Արծրունիի, մեր հորիզոնին վրայի . . . անհետացումը կուենաւ արձանագրելու :

* *

Իմ բաժինն է արդեօք որ մեր մեռած անձերուն վրայ խօսիմ եւ հարցնեմ ձեզ քեկարացիք՝ Արեւելիի մէջ այն նախկին գործերու Դուրեանի մեռած եղբայրը, Յարութիւն Դուրեան, գրած է եղեր ժամա-

նակին, բողոքեցով աչն պղծիչ արքագրութեանց դեմ որովհետև զսէր են «Պետրոսիկ»-ին գործին մէջ: Եւս անգամ շատ էի որ Սիւնոն Թեղեկեան, նախկին ուսուցիչ հայկաթանութեան, գրիչ խաղցուցած էր Դուռեանի գործին մէջ. հիմաւոր մանկոյ միջոցաւ այդ յայտնութիւնը որոշապէս երեւան կու գայ՝ քախսնաւոյ կը հրաւիրենք Սիւնոն Թեղեկեանը որ քաղաքութիւններ սայ հայ գրագիտաց՝ իր կատարած արքագրութեանց վրայ եւ անոնց կարեւորութեանը վրայ: Եթէ Դուռեան պիտի չը մեղնի՝ անոր համար չ'է որ հայերէնի ուսուցիչ մը արքագրութիւններ րէր է անոր մէջ: Սիւնոն ե՞ք. Թեղեկեան հայ գրականութեան հանդէպ քարոյշական պատասխանատւութեան մը պիտի ենթարկուի միջոցաւ որ մեկին քաղաքութիւններ չը սայ իր արքագրիչի դերին վրայ. եւ պիտի է մտածե նախկին հայկաթանը որ, գործակ իր միջամտութեան չափը չը գիտցուի, հայ քանակները միջոց իրաւունք պիտի ունենան իր ձախող միջամտութեան վերագրելու ինչ թերի քան որ կայ Դուռեանի մէջ. ասեմ է որ արդարացեալ ու պաշտպանե ինքզինքը:

Սիւնոն Թեղեկեան մեր հիներուն մէջ գրելու ամենեւեմ անշի դիւրութիւն ունեցողներէն է. մեր նախկին ծրուած հայկաթաններու խումբին մէջ, միակն է, հետաքրքրական տպագր., որ իր ուղղագրութիւնը չը գիտէր, բայց «վայրկենական շուտանկարիչներ» կանխելով, վայրկենապէս ուսանաւորներ գրելու կարողութիւնն ունի: Ես ինքն աշակերտած եմ իրեն. չորս հինգ տարի ազարակի մը տեսուչ ըլլալէն ետք, յանկարծ որ մը մեզի դաստաւը թերին դարձր. անշի՜ աղէկ, մեր բոլոր շարադրութեան դասերը դարձան ազարակի նրկարագրութիւններ, այնպէս որ... յանգիստ տնօրէնին, երկրագործական դաս մ'աչ անցած էր հայերէնի դասին վրայ:

Տաք գագուռներով ուսուցիչ մըն է Թեղեկեան, քանակաւոր յայտնի գգայնութեամբ մը. անաւախկն մեկն աչ որուն գրագիտ խառնուածքը, ապրուստի տրուութիւններէն թիւրած խառնուած է. արքագրութիւնը, սիւնայ բունելու միամիտ հետաքրքրութիւնը իր մէկ հին մտութիւնն եղած է միջոց. կը յիշեմ զինք որ առաջին անգամ մեզի դաս տուով, Տեղեկեանը մը թերեւ տուաւ եւ մեզիմ սիւններ, հակաութիւններ գնալով մասնակից ըլլալ մեզի. երեւակայեցիք թէ որչափ զմայրած էինք մեր ընդ դաստաւորին վրայ. «Մեր Սիւնիկն գրիին սիւնը կը բռնէ կոր...»

Կը յիշեմ որ իր 'ի վեր հանած հակա-

ութիւնները անտեղի չէին. աններքեք քան մը չափսի կրնար կշիռեցնել մեզի պէս ասանորդի շախտներուն. բայց, քաղաքութիւնը, այո՛, իր արքագրութեանց քաղաքութիւնը կ'սպասենք Թեղեկեան ե՞ք:

Ու քանի որ * նախկին մեկ ուսուցչիս վրայ է խօսքը, ինչո՞ւ չը յիշատակել մեկ ուրիշ ուսուցչիս գրիչը որ շոյ տեսած է: Սբ. Մարգարէն Եւս... Զբ. Մարգարէն ապահովապէս յիշատակարանի մը արժեքը պիտի ունենայ. կը հաւատանք որ Գրիգոր ե՞ք. Մարգարէան ցարդ Սբ. Մարգարէն մէջ պարբերաբար հրատարակած կենսագրութիւններէն անշի խնամով մեծ կընոց արժանի կենսագրութիւն մը կընոց է գրել. իր գրիչը չ'ստացանք դեռ, բայց գէթ իր նիւթովը անոնցմէ չ'է որ կարդացուելու են յանձնարարուելի տալը:

Քանի որ կենսագրութեան մը վրայ կը խօսիմք հոս, անտեղի չ'է յիշատակել Աղաւեանի աչն շախտական նախակները որք հրատարակուեցան «Արեւել»-ի մէջ, «Նոր-Դար»-էն արտաստուելով, եւ որովհետեւ մեծ ողբերգական կենսագրութեան համար կարեւոր նիւթեր կրնան նկատուիլ: Անոր որ Աղաւեանի վրայ ուսումնասիրութիւն մը պիտի ընէր, եւ դերասանին հոգեկան վիճակը պիտի ուզէր քննել, կը յանձնարարենք կարդալ այդ նախակները. անաւախկն անոնցմէ հաստատ մը գործունակութեան նշանակալից կը գտնենք:

«Անանովի մօտ հանդիպեցայ Այվազովսկուն, երեւելի նկարչին, որ ինձ ուզել էր տեսնել. 4 վայրկենի մէջ մի ծովային տեսարան ուրուագծեց գրչով եւ ինձ նուիրեց. Կարող էք երեւակայել թէ որքան ուրախացայ. յետոյ ուզեց որ մի քան արտասանեմ. արտասանեցի Բարբառները, իբրեւ ի փոխարինութիւն իւր քանկագին ուրուագծին. սակայն ինչ անցաւ, նրանք մնաց: Այո՛, այնպէս է. նկարիչներէն, երաժիշտներէն, արձակագործներէն, եւ բոլոր գեղարուեստներէն անշի շուտ եւ քարոյշապէս կը մեղնին քաղաքագրի, այսինքն դերասանները. առաջիններուն գործերը, մահից յետոյ ապրելով, կ'ապրեցնեն նաեւ իրենց հետ հեղինակներուն անուններն էլ, այլ խեղճ դերասանաց միայն յիշատակը կը մնայ, այն էլ եթէ ունենան արտի տարեկաններ, նրանց արտի մէջ կ'ապրեն. Այլ քաղաքագրաց համար միայն կը յիշուին այնտեղ, ուր որ կենդանի ծանակակին ծախսահարուած են, այսինքն քաղաքագրի. Եթէ մի հայ քաղաքագրի իմ մահիցս յետոյ, հանդիպի մի ուրիշ դերա-

սանի, որ ներկայացնում է այս ինչ խա-
ղը շատ վատ կերպով, անշուշտ ինձ կը
յիշեի, բայց բասրոնին դռնէն դուրս ելլե-
լուն պէս կը մոռնայ: Եթէ մանկութիւնից
ինձ շատ բացատրեին թէ ինչ է կեանքը,
գուցէ ուրիշ ճանապարհով մտնէի նրանից»

*

Ստուգիւ, կը մտածեմ թէ, առանց բա-
ստրաքեմիկն սերը ունենալու կարելի՞ է
որ դերասան մը տղայ կեանքի հազար
գրկանքներուն: Զրկեալի օրինակ մըն ալ
մեկն ունեցանք մեր աշխիւ անցել, Գասը-
գիւղ: Ծառուշեանէն իր նորակազմ
խումբով հայերէն առաջին ներկայացում
մը տուաւ մեզի: Բաւական վազեր էինք վա-
ղեմի դերասանը ծախահարեղու: Երեսն
քսեցով, մեր հասարակութեան իր բասրո-
նին համար սաժած սերը, աւելի գրաւեց
զիս քան ներկայացումն իսկ: Ե՛հ, սակա-
ւին յոյս կայ որ օր մը մեր բասրոնը վե-
րակազմեմք, վերանորոգեմք Վարդովեանի
անկողնաց ժամանակը: Այնքան տառա-
դրութիւն կը տեսնեմ: Եթէ հայ դերասան-
ներ չ'ունենայինք, պիտի էր որ պատրաս-
տեմք զանոնք, բայց քանի որ ունինք,
մեղք չ'է՞ հասարակութեան որ չ'օգտուի ա-
նկողնէ, մեղք չ'է՞ այդ արուեստագէտներուն
որ չ'օգտուին հասարակութեան: Մ...-ի
խմբագրապետը այսօր կը խօսի բասրոնին
նշանակութեան վրայ մասնաւորապէս: Ինչ
որ ինձ կը մնայ ընել հրաշքեր է Գասը-
գիւղի երիտասարդութիւնը որ բաստրական
յանձնաժողով մը կազմէ, սկիւ Ծառուշ-
եանէն խումբը, միացնէ ուրիշ մէկ
պատրաստակարար արուեստագէտ մը, Մնակեանի
հետ, որ իր հետ աւելու Թրեանցը, Սիւա-
կը, Տիկ. Գոհարիկ Երիկեանը, եւ ամե-
նէն առաջ Տիկ. Հրաչեայն եւ Սիրանոյշը
ու այսպէս հրապարակ ելլէ, իր կար-
ողութեան գիտակցութիւնն ունենալով եւ
հասարակութեան գնահատման ապաւինելով:

*

Բասրոնին համար նոր սեր մը արդէն
նշանակելի է մեր մեջ այս վերջին ասե-
նեաւ: Տիրան եգ. Փախագեան պատրաստ
է Ներկայացը, տաւ հինգ արարուածով:
Բարի յարգողութիւն: Դարձեալ Ծառուշե-
անէն եգեանին իմ հեղինակած է բասրո-
նութիւն մը գործի մօտը կը խոստանայ
մեզ Գասըգիւղիցիներուն: Կանոնաւոր
պիտի երթանք զինք ծախահարեղու: Ինչո՞ւ
Մնակեան եգեանին իր կողմանէ չը ներ-
կայացներ Էդնէսը Լոկովիկին մէկ գործը
գործարարական է ինք հայերէնի: Օրերը
ամեն ասեմ գեղ չ'են երթար, օ՛հ: Մնակ-
եանի ու Ծառուշեանի նման արուես-
տագէտներէ պիտի է, կը կրկնեմ, օգտուի

գիտնանք: Արարեանէն վերջը ինչ կը մը-
նայ մեզի: Պիտի սպասեմք որ մեռնին
այս քաղաքաւոր վարպետները որպէսզի
անոնց արժանիքը ճանչնանք: Եւ նկատեցի
որ հայ դերասանները այն արուեստագէ-
տներն են որ ոչ միայն փառք կը քերէն
մեզի այլ եւ օգուտ, քանի որ բաստրաքե-
միկն բարոյնից, կրթից նշանակութիւնը
յայտնի է այսօր:

*

Զորօրինակ, կրնա՞ք ըսել Այվազովս-
կիին համար, որ այնքան փառք կը քերէ
... Բոլսաց եւ քիչ մըն ալ մեզի, — թէ
դրապէս օգտակար է եղած հայ հասարակու-
թեան: Այվազովսկի մը մեզի համար պա-
ճուճանք մըն է սոսկ, միկն Արարեանը
պաճուճանք մը, ու մեծ կրթից մը միայն-
գաւանջ: Ամերիկային Այվազովսկիի յար-
քանակներու շուրթերը կը հասնին մեզի:
Մեծ խանդավառութիւն հայ ծովակալի
համար: Ամերիկացիներուն նկարչութեան
համար ունեցած պաշտամունքը գաղտնի
մը չ'է: 750000 (եթէ յիշողութիւնս զիս
չը խաբէր) փրակի անոնք չ'են որ գնե-
ցին Միլիթի Առէլ-ը, եւ սակայն Միլիթ
աղբաւ մեռաւ:

*

Երբ խօսքը Ամերիկայի մեջ նկարչու-
թեան արուեստին վրայ կը դառնայ, չ'եմ
կրնար չը յիշել որպէսզի Տեղեւեմ Էփուր-
ճեանը, ծանօթ նկարիչ - դաստնուն որ
սարկներէ ի վեր Միացեալ - Նահանգաց
մեջ հաստատուած էր, իր եղբոր հետ որ
յուսակարիչ է դարձած հիմա: Զ'եմ
գիտեր թէ Տեղեւեմի վրայ քան մը գոր-
ծեցին մեր օրագիրները: Ինքնաստիպ դիմ
մըն էր այս պատրաստակարար մարդը, ու
շատ տալիս: Կուգի՞ք իր արուեստեան
մէկ օրինակը: Օր մը ընկերս (վարժարա-
նըն ենք) ձի մը կը շինէ, որ ձիէ զատ
ամեն քանի կը նմանէր: Տեղեւեմ կը
սկսի արեւը խեղճ հրեշտակած կենդանին,
իր կողմէն նոր մը գծելու մտադրութեամբ:
Երբ պահուն ընկերս, որ քանի մը վայր-
կեան հեռացած էր գծագրից ֆոլիէն, ա-
նոր մօտ կը դառնայ, եւ երբ աջերը խո-
շոր խոշոր կը քանայ զարմանալով որ իր
նկարած, կամ նկարելու ուզած ձիակերպ
կենդանիին քան մը մնացած չ'է Տեղեւեմ
ամենայն պաշտարեալը կը պատասխանէ:
«Արջը փախաւ»

ՄԱՍԻՍ

ԱՐՏՕՆԱՏԵՐ

Կ. Ս. Ի. Թ. Ի. Զ. Ե. Ն.

ՓՈՐԱԳՐԻԶ ՍԵՐՎԻՉԷՆ

ՎԻՍՏԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՊԱՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլս. Մալքան Զաւաւ Աղբիւրի Բով.

